
ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԸ ՄԻԶԱԳԵՏՔ ԱՔՍՈՐՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ*

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ՀՈԳԵՎԱՐՔԸ
(Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)

*Թիրքերու կասկածոտ վերաբերմունքը իմ եւ տեղացի հայերու նկատմամբ.
Ճարապլուսի գերմանական հիւանդանոցը. Հարիրապետ Օթո Էօլման,
գերման սպայ. Մեկնումս:*

Եղեսիոյ դիմադրութենէն ետքը տեղւոյն թէ զինուորական պաշտօնեաներու և թէ չերքեզներու աստելութիւնը գրգռուած էր հայերու դէմ և մասնաւորապէս իմ դէմ, որովհետև միշտ ճգնած էի օգնել անցնող հայերուն և քանի անգամներ բողոքած էի կառավարութեան մօտ: Առիթը եկած կը համարէին ունէ ձեռք վնասել տեղւոյն հայութեան և վրէժ լուծել ինձմէ: Վաղուց ի վեր զգացած էի, որ իմ կացութիւնս ապահով չէ, երբ գրագիր թիրք բարեկամս, որ ազատամիտ և հակաիթիհատական երիտասարդ մըն էր, ինձ յայտնեց, որ չերքեզ Մուստաֆան կը պատրաստուէր դաւ մը սարքելու ինձ համար և թէ իմ հեռանալս անհրաժեշտ էր:

Գերմանացի զինուորականներ միշտ կու գային մակոյկներով, կանցնէին Եփրատի վրայէն և կերթային դէպի Պաղդադ. այդ բանը ինձ մտածել տուաւ, թէ ունէ մէկին հետ ունէ պաշտօնով կրնայի հեռանալ: Այս նպատակաւ դիմեցի ինձ ծանօթ հայ բժշկի մը, որ տեղւոյն գերմանական հիւանդանոցին բժշկապետն էր և որուն կինը գերմանացի էր: Այդ միջոցին հիւանդանոցը պառկած կը մնար գերմանացի հարիրապետ մը՝ Օթո Էօլման, որուն բարեհամբոյր բնաւորութիւնը բժշկապետին ուշադրութիւնը գրաւեր էր. բժիշկը առաջարկեց ինձ ներկայացնել հարիրապետին. իսկ հիւանդանոցի հաշուապահը խոստացաւ իր կարգին բարեխօսել: Զիս ներկայացուցին պ. Օթո Էօլմանին, որ 30–35 տարեկան, վայելուչ դէմքով, հսկայ հասակով մարդ մըն էր: Ինքը պաշտօն ունէր զէնքեր փոխադրել Պարսկաստան, որով Եփրատի վրայէն պիտի հասներ Պաղդադ և անկէ սահմանազուխը պիտի անցնէր: Ես գիտէի այն բոլոր տեղական լեզուները և բարբառները, որ այդ ճամբուն վրայ կը խօսուին՝ արաբերէն, քիւրդերէն, թիրքերէն և այլն, ուստի պայմանաւորուեցանք, որ ես իբր թարգման ուղեկցեմ իրեն:

* Սկիզբը տե՛ս ՊԲՀ, 2017, -1, էջ 136–175, -2, էջ 211–244:

Առաջին պահուն որ իրարու հանդիպեցանք, ինձ հարցուց՝ “հա՞յ ես”, և երբ հաստատական պատասխան տուի, գոհունակութեամբ ընդունեց զիս. կէս ժամու չափ խօսեցանք և համաձայնեցանք, որ հետևեալ առտուն 1915 նոյ. 12-ին ճամբայ պիտի ելնենք: Ճարապըսէն մեկնիլս դժուար էր, մանաւանդ որ անհնարին էր իբրև ուրիշ ազգի պատկանող ծպտուիլ, ինչպէս մտադրութիւն ունէինք ընել ճամբայ ելլելէ ետքը: Բայց Օթօ Էօլման ջանաց, որ մակոյկը մտած միջոցիս ժանտարմաներու կողմէ չարգելուի: 10 մակոյկ յանձնուած էր մեզ, որոնց մէջ կը գտնուէին Պոլսէն եկած գերմանական ռազմաւորերք. իսկ այս նիւթերուն հսկողութեան համար մեզ կրնկերանային 10 ժանտարմաներ, որոնց անձանօթ էի: Գերմանացի սպան առաջարկեց ինձ անմիջապէս իմ հայ ըլլալս ծածկել և ես սուրիացի կաթոլիկ արաբ ձևացայ և անունս փոխեցի Եռսուֆ:

Մեր մակոյկին մէջ ունէինք փայտաշէն խցիկ մը, ուր մենք երկուքս կը քնէինք և կուտէինք: Ունէինք ճանապարհի համար շատ լաւ պաշար, նոյն իսկ ըմպելիներ: Առաջին պահէն իսկ զիս զարմացուց գերմանացի սպայի ցոյց տուած եղբայրական մտերմութիւնը. ինքը խնդրեց ինձմէ, որ ճաշենք, ընթրենք միասին: Ինձ կը պատմէր իր Դաւրեթի մէջ ունեցած կեանքը, ուր կը գտնուէր իր կինը և նորածին երեխան: Մեծ կարօտով կը յիշէր զանոնք և անհամբեր էր հասնելու Պարսկաստան, ուրկէ ետքը արձակուրդով պիտի երթար միանար իր ընտանիքին: Կըսէր, թէ Դաւրեթի մէջ միակ հաճելի ընկերութիւնը կարելի է գտնել հայերու մէջ. յարաբերութիւններ ունեցած էր տեղւոյն հայ վաճառականներուն հետ, յաճախէր էր անոնց երեկոյթները և իր փոխհիւպատոսի հանգամանքով առիթ ունեցեր էր լայն ծանօթութիւններ ունենալ տեղւոյն հայերուն հետ: Ու ամեն անգամ, որ ճամբորդած էր իր գործերու պատճառաւ, Ռուսիոյ և Թիւրքիոյ մէջ հանդիպած էր հայերու, որոնց մասին գովեստով կը խօսէր, մասնաւորաբար Կ. Պոլսոյ հայերու մասին, որոնց տնտեսական և մտաւորական կեանքին հետ շփումն ունեցած էր, և զարմացած մնացեր էր:

Երբ հարցուցի, թէ ինչո՞ւ ուզեցիք, որ ձեր թարգմանը հայ ըլլայ, պատասխանեց. “Ես փորձուած մարդ եմ և գիտեմ իմ հայ պաշտօնեաներու գործունէութիւնը և հաւատարմութիւնը. բայց ձեր մասին մասնաւորապէս, երբ ժամանակը կը գայ, ցոյց կու տամ, թէ ես ինչու հայ թարգման առի”:

Պահ մը, երբ կը զանգատէի իմ նիւթական կորուստներու մասին և կը յայտնէի, թէ ամեն ինչ փճացած էր դէպքերու հետևանքով, նաև հայերու կրած այս սոսկալի տանջանքներու մասին, գերման սպան անկեղծօրէն բացատրեց, թէ այդ բոլորը մեծ ցաւ կը պատճառէր իրեն: Զգուանքով խօսելէ ետքը թիւրք կառավարութեան ապիկարութեան և վայրենութիւններու մասին, կը մեղադրէր նաև հայերը, որ անկազմակերպ և անպատրաստ գտնուեցան իրենց ճգնաժամին մէջ:

“Մենք հայերու մասին մեծ կարծիք ունէինք, ըսաւ անիկա. գիտէինք ձեր ձգտումները, ձեր առևտրական կեանքին բարգաւաճ վիճակը, գիտէինք նոյն իսկ ձեր դպրոց-

ներուն թիւը: Դուք ունէիք կուսակցական կազմակերպութիւններ. ինչո՞ւ պիտի կոտորուէիք այսպէս ոչխարներու նման. ձեր դիմադրութիւնը մեզ չի պիտի զարմացնէր, բայց այս վիճակը անբացատրելի է”:

Օրինակ կու տար Եդեսիոյ դիմադրութիւնը. “Եթէ հայերը կազմակերպուած ըլլային այնպէս, ինչպէս որ կը կարծէինք, և եթէ ամեն տեղ ու ամենքը միահամոյն ձայն բարձրացնէին, իրենց ձայնը անլսելի չէր կրնար մնալ”:

Կը հիանար գերմանացիներու զինուորական ոյժին և թեքնիք միջոցներուն վրայ, բայց և յարգանքով կը խօսէր անգլիացիներու և ֆրանսիացիներու մասին, մանաւանդ կը սիրէր ռուս զազաքները, որոնց հետ յաճախ ճամբորդած էր: Կատէր պատերազմը և կը ծիծաղէր թիւրքերու միամտութեան և տգիտութեան վրայ առանց մանրամասնութեանց մէջ մտնելու: Կըսէր, թէ բոլոր գերման սպաները ի պաշտօնէ ստիպուած են յարգանքով վերաբերուելու թիւրք զինուորականներու, բայց երբ առանձին կը մնային, ի նչ անսպառ նիւթ էին անոնք ծիծաղի և հեզնութեան: Կ. Պոլսոյ մէջ ինքը գրագիր եղած էր գերմանական զինուորական օֆիսին և անձամբ տեղեակ եղած էր, թէ ի նչ անպատրաստութիւն կը տիրէր թիւրք զինուորականութեան մէջ: Նոյն իսկ բարձրաստիճան փաշաներ ավելցիկէ կը խօսէին և յաճախ շուարումի կը մատնուէին: Եթէ գերմանացիներու աջակցութիւնը չըլլար, թիւրքերը կը մատնուէին արագ և ծիծաղելի պարտութեան մը:

Այսպէս խօսակցելով և Եփրատի վրայ հոսանքն ի վար ճամբորդելով, 3 օրէն հասանք Մէսքէնէ (նոյ. 15-ին):

Մէսքէնէ. Վարժուհին. Դէպի Ռաքքա:

Մէսքէնէ՝ Եփրատի երկու ափին աւազուտ ընդարձակ դաշտեր են. աջ ափին կայ մեծ խան մը և պզտիկ հեռագրատուն մը, ուր կը բնակի տեղւոյն զինուորական գայմազամը:

Իմ սպաս ըսաւ. “Երթանք հայերը տեսնենք”: Միասին իջանք աջ ափը և 10 վայրկեան աւազուտ գետինն վրայ յառաջանալէ ետքը՝ ժանտարմայի մը առաջնորդութեամբ հասանք այն վայրը, ուր մօտ 1500 հոգի փռուած էին դաշտին մէջ, իբր ապաստարան ունենալով միմիայն 10 – 15 հովանոցաձև վրաններ: Ասոնք մերսինցի, խարբերոցի, իզմիտցի և աստանացի հայեր էին. այրերը քիչ էին թիւով և միայն կիլիկեցի կամ արևմտեան նահանգներէ: Ամեն կողմ գետինը ինկած էին հիւանդներ, որոնք աւազներու մէջ կը տապալակէին, կը հառաչէին, և երբ անցորդ մը տեսնէին, ողորմութիւն կը խնդրէին: Կին մը նստած էր ճամբուն վրայ և գրկին մէջ առած հոգեվարք մանուկը՝ կօրօրէր զայն. երբ մեզ տեսաւ իր մօտ, ծունկի եկաւ և այնպիսի աղերսական նայուածք մը ուղղեց, որ սպաս անմիջապէս ետ դարձաւ և ինձ ըսելով՝ “Շուտով վե-

բաղարձիր», աչքերը գոցեց և հեռացաւ շտապով: Երբ մօտեցայ սպայիս, ըսաւ. «Երթանք, մենք ունինք խինին և փորահարութեան դէմ դեղեր, տամ քեզի, եկու բաժանէ, որովհետև այդ մանուկը սաստիկ ջերմով կը տառապէր»:

Դեղերը ստանալէս ետքը վերադարձայ արքայապետի հայերու մէջ և կասկածելով, որ իմ մօրաքրոջս աղջիկ Աննան կրնար ատոնց մէջ գտնուիլ, ժանտարմայի մը ընկերակցութեամբ խումբերու մէջ կը պրտտէի և կորոնէի, երբ ահա տեսայ շուրջ 25 տարեկան սիրուն դէմքով և բաւական մաքուր հագուստներով աղջիկ մը, որ ամեն կողմ թափառելով, կը խօսէր ու կը մխիթարէր, և ամենքն ալ յարգանքով մտիկ կընէին զինքը: Ժանտարմը մատնանշելով այդ աղջիկը, ինձ առաջարկեց տանել զայն և գուարձանալ, և այդ նպատակով զիս անոր մօտ տարաւ: Մօտեցայ երիտասարդ աղջիկան, սանձեցի ժանտարման, որպէսզի անպատշաճ խօսք չարտասանէ, և ես սկսայ թիւրքերէն լեզուով խօսիլ աղջիկան հետ:

– Ո՞ր տեղացի էք:

– Բզմիտէն (Նիկոմիդիա):

– Ի՞նչպէս կապրիք:

– Շատ թշուառ կերպով, ահա կը տեսնէք ձեր աչքին առաջը՝ հիւանդ և անօթի ...

– Ի՞նչ կընէք՝ այսպէս պտտելով խումբերու մէջ:

– Իմ մխիթարութիւնս կը գտնեմ ժողովուրդը խրախուսելով ու մխիթարելով:

Երբ իմացայ, թէ ֆրանսերէն գիտէ, սկսանք խօսիլ ֆրանսերէն լեզուով: Չէր գանգատեր ոչ իրենց թշուառութենէն և ոչ ալ կառավարութեան վերաբերմունքէն, միայն հացի և դեղի պակասն էր, որ կը մատնանշէր սոսկալով:

Մեր խօսակցութիւնը բաւական երկար տևեց, երբ վարժուհիին դէմքին վրայ տեսայ գունատութիւն մը. անիկա սկսաւ դողալ և ինկաւ նուաղած: Չորս կողմէն ձայներ կը գոչէին.

– Վարժուհին ալ ինկաւ անօթութենէ:

Ժանտարմը կուգէր նուաղած աղջիկը տանել, բայց ես իմ գերման սպայիս անունով սպառնացի, այնպէս որ անիկա վախեցաւ և ստիպուած հեռացաւ:

Հասայ մակոյկ, առի դեղեր, դրամ և կրկին վերադարձայ դէպի հայերը. վարժուհին սթափած էր, բայց հիւանդ էր. բաժնեցի հաց, դեղ արքայապետի ժողովուրդին. ամեն կողմէն նկատելով իմ բաշխումս, ժողովուրդը խուժեց իմ վրաս և ես հազիւ կարողացայ իրենց ճնշումէն ազատել զիս. ամենքը կը պոռային.

– Էֆենտի՛, հաց, Էֆենտի՛, դեղ...

Արաք կիներ հեռունքէն եկած էին և հազիւ մէկ օխա կշռող բարակ շիւղեր կը ծախուէր 20 փարայի վառելու համար. միջօրէի տաքութիւնը տանելի էր, բայց գիշերուան ցուրտը, մանաւանդ ցօղը, մահացուցիչ էր: Ժողովուրդին կեցած վայրին շուրջ դիզուած էր մարդկային կեղտ, մինչ մէկ կողմէն թշուառ ժողովուրդը կը ջանար իր մէջէն դուրս հանել ամեն տեսակ աղտեղութիւններ:

Այդ միջոցին Հալեպէն կու գային նոր գաղթականներ: Հասնողները չէին կարող նոյն իսկ նստիլ, այլ գետինը կը նետուէին և կը պատկէին. ինքնակորոյս վիճակի մէջ՝ կարծես ամեն զգացում կորսնցուցած էին. և հոն եղող հայերը ունէ հետաքրքրութիւն ցոյց չէին տար նոր հասնողներուն, այնքան ամեն մէկը ընկճուած էր իր սեփական ցաւերով: Շարքերով ինկած, պառկած, մէկը կու լար, միւսը կը հեծեծէր և ոչ ոք կու գար հարցնելու իրենց ցաւը, և ոչ ալ իրարու հետ կը խօսէին: Երբ հարցում կուղղէի. “Խարբերոյցի կա՞յ ձեր մէջ”, նշանով ցոյց կու տային: Երբեմն երկար կը խօսէի և ոչ մէկ պատասխան կըստանայի. աչքիս մէջ կամ կէտի մը յառած իրենց նայուածքը, անշարժ կը մնային և միավանկ մը իսկ չէին ուզեր արտասանել:

Երբ մակոյկ վերադարձայ, տեսայ որ տեղւոյն թիւրք զինուորականը բարի գալուստի այցելութեան եկած էր սպայի մօտ: Երբ իրեն հարցուցի, թէ ինչո՞ւ հաց չէք տար, անիկա պատասխանեց. “Զինուորներուս համար բաւական հաց չունիմ, ո՞ր կէ պիտի կարենամ հայերուն տալ: Թէն շատ ցաւալի է վիճակնին, նոյն իսկ հեռագրած եմ այդ մասին, բայց ես ի՞նչ կրնամ ընել”:

Մութը իջաւ երկրիս վրայ և գերմանացի սպան օրուան մէջ տեսածներէն ազդուած՝ տխուր էր. հակառակ որ այդ ժամուն սովորութիւն ունէր, ոչ կը ծիւրէր և ոչ կը խմէր: Մտահոգ և տրտում նստած էր առանձին և կարծես նոյն իսկ կը զգուշանար ինձ հետ խօսելու:

Դարձեալ եկան մեր ժանտարմաները և գաղտնապէս ինձ առաջարկեցին երթալ հայ կիներով զուարճանալ: “Աստուած ասոնք ստեղծել է մեզի համար, կըսէին, որ-պէսզի այստեղ հանդիպենք իրենց”:

Գերմանացի սպան խիստ կերպով հրամայած էր, որ մեր ժանտարմաները իրենց մակոյկներէն չի հեռանան, բայց անոնք գիշերանց գացեր էին և շատ ուշ, գրեթէ լուսաբացին վերադարձան մակոյկ:

Առաւօտուն մեկնեցանք Մէսքենէն դէպի Ռաքքա. քիչ յետոյ տեսանք հեռուն դիակ մը գետին ջուրերուն մէջ. հետզհետէ մօտեցանք և սկսանք որոշել հագուստները և դէմքը. ես և ժանտարմաները պոռացինք:

– Երեկուան վարժուհի՛ն է, վարժուհի՛ն ...

Այն ատեն ժանտարմաները պատմեցին իրենց նախորդ գիշերուան կատարած քաջագործութիւնները:

– Ի՛նչ յիմար ես, որ չեկար դուն. մենք և տեղւոյն ժանտարմաներու տասնապետը գացինք հայերու տեղը և այս աղջիկը գողցանք, տարինք տասնապետին սենեակը և մինչև լոյս զուարճացանք: Բայց տեսնէիր թէ ինչ կռուարար աղջիկ էր. ավօքաթի^{*}) մը նման մեզ կը ջանար համոզել, կը պատասխանէր մեզի քաջութեամբ անանկ բաներ կըսէր, որ մենք կապշէինք: Վերջապէս յուսահատեցաւ, զայրացաւ և սկսաւ գոչել.

^{*}) Փաստաբան:

– Դուք վայրենի գազաններէն ալ գէշ էք:

Ժանտարմաները շատ չարչարէր էին խեղճ աղջիկը, որ պահ մը խուսափելով իրենց ձեռքէն, ինքզինքը նետեր էր գետը:

Հանդարտ կերթար վարժուհիին դիակը հոսանքին ուղղութեամբ. քակուած մազերը ալեակներուն վրայ կը ծփային և դէմքը ծածկուած էր ջուրի թեթն խաւի մը ներքն:

Հետնեալ առաւօտուն կանուխ տեսանք, որ գետին ձախ ափը իջած էին մարդիկներ ու կիներ. ոմանք ճերմակ գիշերագգեստներ կը կրէին, շատերը հագուած էին եւրոպական հագուստներ և նոյն իսկ կիները եւրոպական տարագով էին. ասոնք կը լուացուէին օճառով և նոյն իսկ գեղեցիկ երեսսրբիչներ ունէին. մեր մակոյկները կանցնէին շատ մօտէն և կը տեսնէինք իրենց դէմքերը. ամեն մէկը յանդիմանական ակնարկ մը նետելով դէպի մեզ, կանցնէին կերթային. սպաս կըսէր. – նայէ՛, կարծէք թէ կը հայհոյեն մեզ:

Մեր մակոյկները յառաջացան և բլրակի մը ետն տեսանք այդ արքայներուն բնակարանները: Անոնք շինած էին հողաշէն ցած և բաւական մաքուր տուներ և քանի մը հատ եղեգեայ խրճիթներ, որոնց առաջքը խոնուած էին նոյն ձևով հագուած բազմաթիւ գաղթականներ: Չի կարողացանք գիտնալ, թէ այդ հայերը ո՞ր տեղացի էին:

Որովհետև մինչև յառաջիկա կայանը մեր ճամբան երկար էր, գիշերները կիջնայինք անապատը և ժանտարմաներու ընկերակցութեամբ երբեմն կերթայինք դէպի արաբներու վրանները, որոնք կը գտնուէին գետեզրէն 15 վայրկեան հեռու: Իրիկուն մը այսպէս հասանք արաբ վրաններու մօտ և լսեցինք, որ անոնցմէ մէկուն մէջ հայեր կան. անմիջապէս ուզեցի հասկնալ, թէ որն է այդ վրանը, բայց ժանտարմաները արդէն գացեր խուզարկեր էին և վերադառնալով ինձ ըսին. “Մի՛ երթար, բան մը չիկայ, ոչ աղջիկ կայ, ոչ երիտասարդ կին”:

Վրանը մազէ հիւսուած էր և բաժանուած էր երեք մասի, որու մէկ կողմը արաբին կովերը և ոչխարները կային. երկրորդ մասին մէջ, որ հազիւ 4 քառակուսի մէթր էր, խոնուած էին 40 – 50 պառաւ կիներ և այր խառն: Երբ ես ներս մտայ, զիս կառավարական պաշտօնեայ կարծելով, բոլորը մէկ ոտքի ելան բարնելու համար: Իրենց դրութիւնը սոսկալի էր. պառկելու տեղ չունէին բնականաբար և նստած կը քնանային. ոչ միայն երեխաները, այլ և պատանիները իրենց մօրը գիրկը քնած էին. բայց և այնպէս, երբ հարցուցի իրենց վիճակի մասին, վախենալով իմ հարցումէս, մեծ գոհունակութիւն ցոյց տուին և դողահար ձայնով ամենքը մէկ սկսան աղօթել սուլթանին արնշատութեանը համար: Իրենց այդ հոգեկան սոսկալի դրութիւնը չափազանց գէշ ազդեց իմ վրաս և ուզեցի անմիջապէս հեռանալ, բայց ինձ ընկերացող ժանտարման զիս պատուելու համար արաբէն ջորի մը պահանջեց, որպէսզի զիս ետ դարձնէր: Արաբը ցոյց տուաւ հայերու միակ և վտիտ ջորին, որ կապուած էր վրանին առաջք: Երբ ժանտարմը մօտեցաւ ջորիին, հայերուն դէմքը բոլորովին այլայլեցաւ. այն ատեն խորապէս յուզուած բարձրաձայն ըսի.

– Չեմ ուզեր. թողէ՛ք ջորին. ես քալելով կը վերադառնամ:

Բայց այս անգամ հայերը իմ մերժումէս վախնալով, կը պաղատէին ու կըսէին.

– Հեծիր, գնա՛, հէլալ ըլլայ քեզի:

Չէին գիտեր, որ եթէ ջորին տանէի, աւելի վատ էր իրենց համար, քան եթէ չի տանէի. իրենց այս շփոթութիւնը, վախը ազդած էր իմ վրաս և ես ալ չէի գիտեր, ինչպէս ընեմ զիրենք հանդարդեցնելու համար: Հարկ եղաւ ջորին վերցնելու, որը վերադարձնելու համար ինձ ուղեկցեց հայ պատանի մը: Ճամբան զինքը ապահովցնելու համար յայտնեցի, թէ ես քրիստոնէայ եմ, այն ատեն տղան պատմեց. թէ իրենք Մարաշի կողմերէն են և ցաւով պատմեց այդ խումբ մը հայերուն կրած տառապանքները: Անօթի, ծարաւ, ամէն օր կըստիպէին զիրենք տեղերնին փոխել. արաբները միայն կտոր մը սն հաց կուտային իրենց: Ջորին իրն էր և խեղճ կենդանին կը կրէր ամբողջ խումբին բեռը իրենց անդաստական թափառումներու միջոցին: Երբ տեղ մը կը կենային, ժամանակ չէին տար, որ ջորին հանգստանար. անցնող դարձող զինուորականները, զինուորները կամ ժանտարմաները բռնի կառնէին գայն, կը լծէին կառքի, կը բեռընէին անտանելի բեռեր և երբ ջորին չէ՛ր կրնար տանել, կըստիպէին պատանին, որ մտրակէ գայն կամ թէ բեռը ինքը վերցնէ: Այդ ջորին, որ պէտք էր արքայապետներու վիճակը թէթեւեղել, պատուհաս մը դարձած էր և այսպէս ըսելով կը բաժնէր իր տէրերուն ճակատագիրը:

– Արդէն ջորին ուտելիք ալ չունի, կըսէր պատանին. մեզի հետ ասդիէն-անդիէն չոր խոտեր կըծոտելով կապրի կոր:

Մեր մակուկավար ժանտարմաներ իրենց հետ պարկերով ալիւր բերած էին, որպէսզի թանկ գիներով ծախեն տեղահանուած հայերուն:

Գիշեր մը, երբ զբաղած էին ծախել ալիւրը, ամեն կողմէ սկսան վազելով գալ խումբ խումբ հայեր. դրամ ունեցող դրամ կուտար, շատերը այլ և այլ իրեղէններով կը վճարէին և նոյն իսկ ոմանք իրենց մանուկը ու պատիւր ծախելով, կուզէին ալիւր առնել. բայց ժանտարմաները ու մակուկավարները կը մերժէին և կը պահանջէին կամ դրամ կամ իրեղէններ:

Ասդիէն-անդիէն հապճեպով կրակ կը վառէին և ալիւր գնողները, որոնք բաղդաւոր ունեւորներ կը համարուէին, կառանձնանային շտապով կը շաղէին կը խմոր մը կը շինէին առանց աղի և առանց թթիւմորի և կը նետէին կրակի մէջ ու վառած շիւղեր դիզելով այդ խմորին շուրջ բոլոր անհամբերութեամբ կը սպասէին, բայց խմորը չեփած, մատներնին այրելով, կը յափշտակէին ու կտոր կտոր խլելով կուտէին: Անոնք, որ չէին կրնար ալիւր առնել, կէս թմրած վիճակի մէջ տարածուած էին գետինը և ամեն կողմէ անգօր ցանկութեան և տնքոցի ձայն կը բարձրանար: Այս թշուառներուն մանուկները հաց եփողներուն շուրջը դեգերելով, հաց կը մուրային, երբեմն իրենց մօրա-

քոյրէն, հօրաքոյրէն, բայց մարդիկ իրենց ծայրայեղ և գերմարդկային դժբաղդութեան մէջ դարձեր էին անկարեկիր և անողոք, ու նոյն իսկ չէին պատասխաներ սոված մանուկներուն:

Ուշադրութիւնս դարձաւ խումբ մը մանուկներու վրայ, որոնք խոնուած էին ալիւրի պարկին շուրջ և մատերնին թրջելով կը հաւաքէին ու կուտէին գետինը մաղուած ալիւրը:

Ռաքքա. Հայոց գերեզմանատունը. Խենդեցած մարդոց տեսարանը դաշտին մէջ. Ռաքքայի ձախ ափի արքայականներու վիճակը. Աղջիկան մը թաղումը:

Երկու ափերը կը տարածուէին աւազուտ դաշտեր. գետին մէջտեղը պզտիկ կղզի մը կար, ուր կերնային բոյսեր. աջ ափին էր Ռաքքա քաղաքը 600 – 700 տուն բնակիչներով, որոնք ամբողջովին արաբ էին. տուները հողաշէն էին և քաղաքը ուներ փոքրիկ շուկայ մը. ժամը 11-ին (ը. թ.) հասանք Ռաքքա, ուր ձախ ափին վրայ տեսանք շուրջ 5000 հայերու բազմութիւն մը, որոնց մէջ կային Հայաստանցի, Կիլիկեցի և Անատոլցի (արևմտեան նահանգները) հայեր: Այդ բազմութենէն քանի մը երիտասարդներ անցան աջ ափը ժանտարմայի մը ընկերակցութեամբ, որպէսզի հաց և ալիւր գնեն: Գիշերը շուտ վրայ հասնելուն չի կարողացայ քաղաք երթալ և մակոյկէն սկսայ դիտել շուրջս: Գետափին մի քանի հայ գաղթականներ կը թափառէին, տեսայ որ մեր ժանտարմաները բռնի կերպով բեռնուցին իրենց բերած ալիւրը, որպէսզի քաղաք տանին ծախելու: Ձախ ափին վրայ գտնուող հայերը կընծայէին տարօրինակ տեսարան մը. կարծես թէ տօնավաճառ մըն էր այնտեղ. գիշերուան մութին մէջ հայերու խումբերը ամբողջովին լուսաւորուած էին վառուած օճախներու լոյսերով:

Կէս գիշերը անց էր, երբ քուններնէս արթնացանք սարսափելի աղմուկով մը, կանանց և երեխայոց աղեկտուր ձայները, չաքալներու ռոնոցը, աղջիկ թէ կայք փախցնող գիշերային գողերու կանչերը, իրարու կը խառնուէին: Կրակները մարուած էին և բան չէինք կարող տեսնել, բայց գիշերուան ցուրտէն հեկեկացող մանուկներու լացն ու աղաղակը, որ կը տիրէր միւս ձայներուն, մեզ կը դողացնէր ջղագրգռութենէ: Պահ մը ետքը իմացանք եղելութիւնը: Ժանտարմաները որոշեր էին այդ միջոցին ճամբայ հանել արքայականները: Մէկ մասը քունի մէջ, մէկ մասը ցուրտէն դողդողալով, մէկ մասը իրարու մօտ եկած, ապշած, զարհուրած, առանց կատարելապէս սթափուելու, մութի մէջէն կը քալեցնէին՝ քշելու համար արքայականները Միջագետքի խորքերը:

Երբ լոյսը բացուեցաւ, ձախ ափին մարդ չէր մնացեր, միայն հովը մարած օճախներուն մոխիրը կը ցրուէր օդին մէջ:

Արևը ծագեցաւ և ես ժանտարմայի մը ընկերակցութեամբ պատրաստուեցայ մեկնել դէպի Ռաքքա քաղաքը, որ գետափէն 10 – 15 վայրկեան հեռու էր: Գերման սպան շատ տխուր տրամադրութեան մէջ էր. գիշերուան մէջ բարձրացող ձայները ազդած էին իր վրայ և վերյիշելով մանաւանդ ճամբու վրայ տեսածները, մոայլ թախիծի մէջ էր. չէր ուզեր նոյնիսկ բաց օդին ելլել. սենեակը փակուած նստած էր և կը զարմանար, թէ ես ի՞նչպէս կրնամ երթալ իմ հայրենակիցներուս այդ վիճակը տեսնելու:

Աւագուտ դաշտին մէջէն կը յառաջանայինք, երբ ժանտարմը ինձ ըսաւ.

– Այդ կողմէն մի երթար, եկուր այս կողմէն:

Նայեցայ այդ արգելած կողմը և առաջին ակնարկով բան չի տեսայ. յետոյ դիտեցի. լայնատարած աւազի դաշտը, կոհակաւորուած էր անթիւ պզտիկ աւազակոյտերով. բայց ասիկա անսովոր բան չէր. անապատի քամին երբեմն ծովի պէս կալեկոծէ աւազները և համաչափ կոյտեր կը կազմէ նման ծովի ալիքներուն: Հարցուցի ժանտարմային.

– Ի՞նչ կայ որ այն կողմ:

– Մի թէ չես տեսնար. դեռ կերևան կեալուրներուն ոտքերը, գանգերը:

Աչքերս բացուեցան կարծես և անմիջապէս տեսայ ամեն ինչ:

Ոչ թէ հարիւրներով, այլ հազարներով կերևէին մարդկային կմախքի բեկորներ՝ ցրուած անապատի աւազներուն մէջ:

Ասոնք չէին թաղուած այլ հայտնի էր, որ ինկած տեղերնին մնացած էին և առանց դիակները ամփոփելու՝ աւագով ծածկած էին զանոնք: Շուները և բորենիները աւագը պեղելով դուրս հանած էին ո՛ր մէկին անդամները, ո՛ր մէկին գանգը. հակառակ ժանտարմային նախազգուշութեան՝ զացի այդ համայնատարած գերեզմանին ուղղութեամբ, բայց հետզհետէ դժուար եղաւ յառաջանալ. կմախքները աւելի խիտ էին և ամեն մէկ քայլիս վախը ունէի, որ պիտի կոխեմ դիակի մը վրայ, կամ աւազակոյտերու մէջ ոտքս խրելով պիտի հասնի մարդկային կմախքի մը: Ըսի ժանտարմային.

– Այդչափ ալ մեռեալ կըլլա՞յ միթէ:

– Հա՛, հա՛, ծիծաղելով պատասխանեց: Ասոնք բնական մահով մեռած, կամ սպանուած մարդիկ չեն, ասոնք այս ամառ ծարաւէն ինկող առաջին աքսորեալներն են. երբ ժանտարմաները սուինը ձեռքերնին և ձիաւոր՝ կը բռնէին Եփրատի ափը, երեսուն քայլ անդին քշուող մարդկային հօտէն ո՛վ կը համարձակէր շղթան անցնել և երթալ ջուր խմելու:

Երբ դուրս ելանք մեռելներու այս դաշտէն, հանդիպեցայ տեղացի արաբի մը, որուն հետ երկար խօսեցայ հայ աքսորեալներու մասին: Անիկա թէ կը խղճար հայերը և թէ կը գանգատէր, որ շուկային տէրը դարձած են: Բացատրեց, որ բաղդադմամբ տեղահանութեան առաջին օրերու, այժմ իրենց վիճակը բարուրդուած է: Այն մեռեալներու պատմութիւնը քստմնելի և անհաւատալի պատմութիւն մըն էր: Հազարաւոր հայ աք-

սորեալներու բազմութիւն մը, չի գիտցուեր ո՞ր վայրերէն եկած, սաստիկ յոգնեցնելէ ետքը ոլոր մոլոր ճամբաներէ, անօթի, պապական անապատի միջօրէի կիզիչ տաքին ներքեւ, կողոպտուած, մերկ կամ կիսամերկ հասցուցած էին այս դաշտը, ուր արգելած են զէն ի ձեռին Եփրատի մօտենալ ծարաւը յագեցնելու: Գետին շուրջ 30 քայլ անդին ջուրին ձայնը լսելով և ծարաւէ խելագարուած մարդիկ ինկեր ու մեռեր են քանի մը օրուան ընթացքին, ամբողջապէս:

Հազարաւոր դիակներու տեսքը, անոնցմէ արտաշնչուող խիստ նեխութիւնը, որ հոլը կը տանէր անապատին մէջէն մինչև հեռաւոր ովասիսները, գէշ ազդեր է տեղւոյն բնակչութեան վրայ և վրդովմունք յառաջ եկեր է տեղացի արաբներու մէջ այսքան անօգուտ անգթութիւններու ի տես: Կռաւալարութիւնը ստիպուած էր ինկած դիակները գոնէ ծածկել, և ժողովելով մէկ քանի արաբ զինուորներ, անոնց յանձնած է այդ գործը: Զինուորները չուզելով երկար մնալ այդ ապականուած վայրին մէջ, հապճեպով, թիերու օգնութեամբ, աւագով ծածկած են մեռեալները:

Ճանապարհին երկու կողմերը բաց դաշտերու աւագուտին մէջ ցիր ու ցան տեսան քանի մը կիներ ու այրեր, որոնք իմ ուշադրութիւնս գրաւեցին իրենց աննպատակ շարժումներով: Այր մը կերթար, կուգար, ձեռքերով շարժումներ կընէր. երբեմն կը կենար և կարծես բռնցքով կը կռուէր մէկու մը հետ. ուրիշ մը գետինը նստած, զուխը ձեռքերուն մէջ աւագը կը դիտէր պիշ նայուածքով. անդին ուրիշ մը ձեռքը փայտ մը աւագին վրայ ինչ որ գիծեր կը գծէր, հաշիւներ կընէր: Այսպէս բոլորն ալ մէկ մէկ երևակայական զբաղումով գրաւուած, ոմանք իրարու հետ կռուելով տենդագին, խելայեղ կը չափչփէին ամբողջ դաշտը առանց այդ սահմանէն դուրս ելնելու: Հարցուցի արաբին.

– Ի՞նչ են այս մարդիկ, ինչո՞ւ այսպէս կընեն:

Անիկա պատասխանեց.

– Ասոնք մեծատուններ են եղեր իրենց տեղը. հոս եկեր խենդացեր են. ամեն օր կաւելնայ այս խելագարներու թիւը, երէկ այսքան չի կային:

Անդին շարքերով կիներ, աղջիկներ, մանուկներ կերթային դոյլերով ջուր բերելու գետէն. ոմանք լուացք կընէին և շատ կիներ ու աղջիկներ գետեզրը նստած իրենց ցաւը կուլային:

Երեկոյին վերադարձիս գերման զինուորականս պատմեց, թէ այր ու կին երկու ծերունիներ սև շալուարներ հագած, հաւանականաբար Գոնիացի, եկեր նստեր են գետափը, ժամ մը խօսեր ու լացեր էին ու վերադարձեր էին դեպի խումբը:

Այն ճամբան, ուրկէ կը քալէինք, ամենէն ամրացած մասն էր, բայց դարձեալ անհաստատ աւազը դժուարին կը դարձնէր մեր քալուածքը և ոտքերնիս կը խրուէր աւազին մէջ. իսկ անդին դաշտին մէջ, ուրկէ կերթնէկէին հայերը, աւազը այնքան շարժուն էր, որ կը մխուէին երբեմն մինչև իրենց ծունկերը:

Աղջիկ մը, ցնցոտիներու մէջ, ծանր դոյլ մը շալկած և մէկ ձեռքով մանուկ մը բռնած՝ եկաւ մեր անցած ճամբէն քալելու՝ գետինը պինդ ըլլալուն պատճառաւ: Մերսինցի հայ տղայ մը, մեզ ցոյց տալով կը պոռաք ետնէն.

– Չե՞ս տեսներ այս շուները, որ ճանապարհէն կը քալես. ինչպէս երէկ Աստղիկը, այսօր ալ քեզ կը փախցնեն:

Վերջապէս հասանք քաղաք: Շուկան ունէր մօտ 100 խանութ, որուն կէտը գրաւած էին կիլիկեցի և անատոլցի հայեր: Հաստատներ էին քանի մը փուտեր, որոնց տէրերը կապալով առած էին բանակին հաց հայթայթելու գործը: Կային հայ խոհարարներ, մսավաճառներու, քեպապճիներու խանութներ, բանջարեղէն և այլ ուտեստեղէն ծախողներ: Կային կօշկակարներ, կլայեկողներ, թիթեղագործներ, խահուեճիներ և պղնձագործներ: Շուկային մէջ կերևային նաև կիներ ու մանուկներ, որոնք շրջուն վաճառողներ էին և կը ծախէին իրենց երկրի կերակուրներ ու քաղցրեղէններ, որը արաբ ժողովուրդը մեծ հաճոյքով կը գնէր: Առանձին ըլլալէս օգտուելով, մտայ հայ նպարավաճառի մը խանութը, որուն երբ յայտնեցի թէ ես քրիստոնեայ եմ, սկսաւ գանգատել և ողբալ:

Կառավարութիւնը յայտներ էր իրենց, որ այլևս այդ երկիրը պիտի բնակին և պատերազմէն ետք պիտի քննուի. այն որ իր հայրենի երկրին մէջ հող ունէր, պարտէզ ունէր միևնոյն տարածութեամբ հող պիտի տրուի իրեն Միջագետքի մէջ. կամ հողերը ու այգիները ծախուելով փոխարժէքը հոս պիտի տրուի տիրոջը:

Նպարավաճառը կիլիկեցի էր. ա խ քաշելով իր հայրենիքին համար սրտանց կուլար, հեկեկալով կուլար:

Կը գանգատէր նաև ու կըսէր.

– Մեր այս վիճակին մի՛ նայիք, այս ապրանքը ամբողջ պարտքով առած ենք արաբներէն, որով հազիւ կարող կըլլանք մեր ընտանիքը անօթութենէ և մահէ փրկել: Բայց այս այսպէս երկար չի մնար: Այսօր կամ վաղը կառավարութիւնը մեզ այստեղէն կուղարկէ ուրիշ տեղ մը և ցոյց կուտար դիմացի շարքի խանութները, որոնք պարապ էին:

– Ասոնք ամենքը հայերը բռնած էին, առուտուր կընէին, կառավարութիւնը զիրենք ուղարկեց անձանօթ տեղեր:

Վերադարձիս կէս օր էր, դաշտին վրայ մարդ չէր մնացած բացի խելագարներէն, որոնք տենդով կը շարունակէին իրենց երևակայական գործերով զբաղիլ: Մէկ ալ տեսանք, որ երկու կիներ, տախտակի մը վրայ դրած էին կնոջ դիակ մը և կը տանէին մեռելներու այն դաշտը, որ կառավարութիւնը կոչած էր հայոց գերեզմանատուն: Բայց ճանապարհին մարդ մը քաշեց առաջէն քալող կինը, որ տակաւին դեռատի էր, դիակը գլորելով ինկաւ, իսկ մարդը տարաւ աղջիկը քաշքշելով:

Հալէպէն բերուած արքայերէններու հանգրուաններն են Մէսքէնէ, Ռաքքա, Տէյլ-իւլ-Զօր և այլն: Այդ վայրերուն մէջ տեղահանուած հայերու մնացորդներ երբեմն կը մնան մէկ ամիս, երբեմն աւելի: Երբեմն ալ անմիջապէս առանց հանգստանալու կը քշուին Միջագետքի խորքերը: Ամեն ինչ կախուած է զիրենք առաջնորդող ժանտարմաներու քմահաճոյքէն: Միշտ կը հասնին նոր խումբեր. և նախորդները ճամբայ կելնեն: Խանութ բացողները, տուն վարձողները, ունէ կերպով տեղաւորուողները հին խումբերու կը պատկանին: Այդ հանգրուաններուն մէջ, եթէ քիչ մը երկար կանգ առնին հայ ընտանիքները, կամփոփուին և անմիջապէս կեանք մը կստեղծեն իրենց համար: Վրաններու ներքեւ, թէ տուններու մէջ անոնք իրենց անցած տեղը շէնցուցած են նոյն իսկ այդ կարճատև կայանքներու միջոցին: Տեղացի արաբ ժողովուրդը կաջակցէր իրենց ամեն բանով, բայց դժբաղտաբար երբեք հայերը տեղ մը չէին տեղաւորուեր վերջնականապէս:

Հրաման կուգար կամ զիրենք տանող ժանտարմաները կը վճռէին, և հարկ էր ամեն ինչ թողլով, ճամբայ ելլել դէպի անձանօթ և հեռաւոր կայաններ:

Դէպի Տէյլ-հւլ-Զօր. Մարաշի հայ գիւղացիները. Եփրատի ափերու ժողովուրդի պատկերը. Կրկին հանդիպում հայ աքսորեալներու խումբի մը:

Ռաքքայէն մեկնեցանք նոյեմբեր 19-ին: Երկրորդ օրը մականկավարները կեցան ձախ ափին, որպէսզի գաղթական հայերէն փայտ գնեն: Այստեղ հաստատուած էին Մարաշի շրջականերու հայ գիւղացիներ և անապատը շէնցուցած էին իրենց շինարարական ընդունակութիւններով: Բլրակի մը կողին վրայ շինած էին աւագէ կղմինդրներով ծածկուած 70-ի մօտ տուններ, որոնց մէջտեղը խան մը, ուր լեցուած էին դէզերով լաւ տեսակէ փայտածուխ, և կտրուած փայտերու խուրձեր: Ոմանք ջորիներ ունէին, որոնցմով շրջակայ գիւղերէն կամ քաղաքներէն կը բերէին ապրանքներ. ասդին-անդին դիզած էին սէխ, ձմերուկ, արմաւ և այլն ու տեսակ մը պագար կազմած էին, ուրկէ կուգային գնելու նոյնիսկ ճամբորդ արաբները: Բաւական շրջեցայ տուներուն մօտերը և բաց դռներէ նայելով, դիտեցի, որ մաքուր և կոկիկ կերպով յարդարած էին ամեն ինչ. բարակ շիւղերով և թելերով շինած էին փսիաթներ, որոնցմով ծածկած էին իրենց տուններուն գետինը:

Եփրատի ափին կային նաև հայեր, որոնք զբաղած էին ձկնորսութիւնով. մականկավարները, որ թիւրք էին, նախանձով կը խօսէին հայերու վրայ և կըսէին. “Կեւովորները ոսկիի տէր դարձան այս մօտակայ անտառին փայտովը”:

Աջ ափին կար զինուորական գրաման կեդրոնատեղի մը, որուն տնօրէնը հրաւիրեց զինուորականս և զիս. այդ կեդրոնատեղիին մօտ կային 200 տեղահան եղած հայ ընտանիքներ, որոնք կիլիկեցի գիւղացիներ էին. ամենքն ալ կը բնակէին իրենց շինած եղեգնեայ խրճիթներու մէջ:

Մտանք պաշտօնատան ընդարձակ սենեակը, ուր մեծ յարգանքով ընդունեցին մեզ. այնտեղ լսեցինք, որ պաշտօնեաներու, գրագիրներու, ծառաներու մեծ մասը հայեր են: Միւտիրը մեծ զարմանքով և գովասանքով կը պատմէր, թէ ինչպէս հայերը այս մեծ անապատին մէջ իրենց աշխատութեամբ և հնարամտութեամբ յաջողեցան 200 ընտանիքի կեանքը ապահովել:

Գացի այցելելու եղեգնեայ խրճիթները, ժրաջան աշխատութեամբ զբաղած էին ամեն մէկը. պատանի մը փայտ կը կոտրէր ու կը դիզէր. անդին կին մը լուացած ցորենը կը սփռէր արևին տակ. ուրիշ կին մը ժանտարմային չափը կառնէր անոր շապիկ կարելու համար, նոյն իսկ երեխաները զբաղած էին ունէ գործով:

Երբ գերմանացի սպան կաթ կը փնտռէր գնելու համար, հայ պատանի մը ըսաւ.

– Ես գիտեմ, թէ որտեղ կաթ կայ, ի՞նչ կուտաք ինձ, որ ցոյց տամ տեղը:

Մայրը բարկացաւ այս վարմունքին համար, բայց անիկա աշխուժով մեզ առաջնորդեց արաբի մը տուն, որմէ իբր վարձք ստացաւ գաւաթ մը կաթ, իսկ սպաս զինքը լիովի վարձատրեց:

Այս հայերը, որ տեղափոխված էին, բաւականին կազդուրուած էին, լաւ երևոյթ ունէին, մաքուր հագնուած էին և կերներ, որ նախապէս ալ կողոպուտի չէին ենթարկուած:

Արդէն կիլիկեցիները առհասարակ անհամեմատ աւելի լաւ վիճակ ունէին, մանաւանդ որ այրերը իրենց ընտանիքներու մօտ մնացած էին. իրենց կեանքի հանգամանքներէն կերևար, որ գոնէ որոշ չափով օրէնքի պաշտպանութիւնը կը վայելէին:

Մեր մակոյկները ճամբայ ելան, և երկու ավերու միօրինակ և տափարակ տարածութիւն դիտելով կը յառաջանայինք: Քանի մը ժամ ճամբորդելէ ետքը, ձախ ավին վրայ տեսանք խումբ մը կիներ, հրեշային դէմքով պառաւ մը, մանուկ մը գնչուի նման, խանձած արևէն ու թշուառութենէ, այլակերպուած դէմքերով, որոնք գետափը նստած բոլորովին մերկ զիրար կը լուանային: Հակառակ որ իրենցմէ քանի մը քայլ անդին կը գտնուէին արաբական վրանները, որոնց առաջը նստած էին արաբներ, հակառակ որ մեր շարք մը մակոյկները իրենց շատ մօտէն կանցնէին. անոնք անտարբեր կը մնային և ունէ կերպով չէին փորձեր իրենց մերկութիւնը ծածկելու: Անոնք անփոյթ մեր ներկայութեան՝ կը շարունակէին իրենց գործը և երբեմն ալ աւագով կը շփէին իրենց անդամները:

Գետափէն հեռու կերևէին ուրիշ խումբեր, որ կը շարժէին, խումբեր որ նստած էին ու միշտ և միշտ ասդին-անդին լքուած հայերու խումբեր մինչև մեր տեսողութեան հեռաւոր սահմանին վրայ:

Յորեկ մը կանգ առինք գետափը և գիշերեցինք այնտեղ. հետևեալ առաւօտուն տեսանք այն տասնապետը, որուն ամիս մը առաջ հանդիպած էի Ճարապլուսի մէջ իր գաղթականներու խումբով:

Աքսորեալներու մնացորդը այնտեղ էր և մէկ ամսուան մէջ փոխուած էր հիմնովին. լքուած ու թշուառ կը մնային Եփրատի ավին. չունէին այլ ևս իրենց գոյնգոյն հագուստները, որոնցմով անցած էին, չի կային աղջիկներ, ոչ ալ մանուկներու խումբեր, և մնացեր էին միայն պառաւ կիներ, որոնք ապշած կը դիտէին գետին ընթացքը: Մեր տասնեակ մը մակոյկներու ներկայութիւնը, մեր անցուղարձը, լուսանկարի մեքենան չէին հետաքրքրել զիրենք, այս ամենքը կարծես թէ շուք մըն էր, որ կանցնէր իրենց սնեռած աչքերուն առաջքէն: Այստեղ կենդանութիւնը դադրած էր, չի կար եռուզեռ, ոչ ալ աղմուկ, հեծեծանք և ոչ ալ արցունքոտ աչքեր. միայն մեռելային լռութիւն էր, որ կը տիրէր: Անոնք թնձուկ մագերով, մերկ ոտքերով, պատռտած լաթերով, սնցած դէմքերով, երկարած եղունգներով ու փոսացած ահաւոր աչքերով սոսկում կը պատճառէին նոյն իսկ ժանտարմաներուն. մարդ չէր համարձակեր մօտենալ կամ խօսել այս ուրուականներուն:

Ժանտարմաներու տասնապետին օգնականը պատմեց, թէ ինչպէս այս վիճակին հասած էին:

Մամսատի մօտակայ վայրէ մը մեկնած օրերնին իրենց որոշ թիւն էր 541, ունէին քաջառողջ վիճակ, ճոխ հագուստներ, դրամ և զարդեղէն: Այս ամենքը ճանապարհին կողոպտուեցան տասնապետէն: Երբ աքսորեալները զրկուեցան իրենց նիւթական միջոցներէն, շատերը մեռան ծարաւէ, անօթութենէ, յոգնութենէ և տաքէ: Տակաւին խումբը արիութեամբ կը կրէր այս չարչարանքները և սուգերը, բայց երբ հասան Ռաքքա ու անկէ պիտի մեկնէին, իրենց վիշտը խելագարութեան աստիճանին հասաւ:

– Ի՞նչ եղաւ որ Ռաքքա :

– Գայմագամի հրամանաւ կիները բաժնեցին երկու մասի. տարեց կիներ ու պառաւներ մէկ կողմ, մանուկներ և աղջիկներ միւս կողմ. այս վերջինները մնացին Ռաքքա, իսկ ասոնց բերին հոս. այդ բաժանումը կատարեցինք գիշերը մութին մէջ. այդ ժամը չեմ կրնար մոռնալ ես: Տասնապետը հրամաններ կը գոռար և մենք բոնութեամբ կը բաժնէինք զաւակը մօրմէն, քոյրը քոյրէն, որոնք իրարու փաթտուած չէին ուզեր իրարմէ բաժնուիլ: Բայց աւելի գէշը այն էր, որ ծծկանները կը բաժնէին իրենց մայրերէն, որոնք նուաղելով կինային:

Այն օրը յոգնութենէ սպառեցանք: Մաստիկ կերպով դիմադրեցին. չէին վախնար ոչ մեր սպառնալիքներէն, ոչ մեր ազդած սարսափէն և ոչ ալ խարազանի հարուածներէն: Մէկ քանին հոն մեռան ու մնացին, իսկ ասոնց մէջ խենթերու թիւը հետզհետէ կը շատնայ և շարաթը մէկ քանի հոգիներ ինքզինքնին գետը կը նետեն:

Երբ մութը պատեց աշխարհը, դուրս եկայ մակոյկէս, բայց տարօրինակ սոսկում մը զիս պատեց. կերևակայէի աւագոտ ընդարձակ աշխարհը, ուր խաւարը կը տիրէր, ու այս սև լռութեան մէջ իմ ցորեկը տեսած աքսորեալներու խումբին պէս անհամար խումբեր, շէն և բարգաւաճ հայ քաղաքներու և գիւղերու մնացորդներ կոզկոտէին տաժանելիօրէն:

Նովը դադրած էր, Եփրատը անշշուկ կանցներ ու իր ճերմակ երեսը կը գծուէր համայնատարած խաւարին մէջ: Ամեն մարդ քնացած էր և առիթը լաւ էր երթալ խօսելու համար դժբաղդներուն հետ. աւագին մէջ խրուելով կը քալէի, բայց ահա մտքիս առաջ ներկայացան ցորեկուան հրէշային պատկերները, այդ սոսկալի ուրուականները, և դողահար անմիջապէս ետ դարձայ ու մտայ մակոյկս:

Տէյլ-իւլ-Ձօր. Հագարապէտին հետ տեսակցութիւն. Շուկան.

Մէզերեցի աղջիկ մը. Դեղարանին առաջը:

Նոյեմբերի 24-ին հասանք Տէյլ-իւլ-Ձօր: Այստեղ գետը կը բաժանուի երկու ճիւղի, մէջտեղը ունենալով մեծ կղզի մը, որ կամուրջով միացած է աջ ափը գտնուող քաղաքին հետ, որ մօտ 45,000 արաբ բնակիչ ունի: Կան 15 տուն տեղացի հայեր, որ ունեն

մատուցումը: Ամեն հայաբնակ վայրերէ արքայութեան հայեր 10,000 է աւելի կը գտնուեն Տէյլ-իւլ-Ջորի մէջ:

Այս արքայութեան տեղաւորուած են հետեւեալ կերպով. կիլիկեցիները գրեթէ ամբողջապէս հողաշէն տուններու, խանութներու և քերականութեաններու մէջ. գիւղացի կիլիկեցիները և հայաստանցիներու մէկ մասը՝ քաղաքէն դուրս սև վրաններու ներքեւ. իսկ մնացեալը կը կենան բացօթեայ գետափը, պարտէզներու մէջ, ասդին-անդին:

Քաղաքը տակաւին չի մտած՝ մէկ ժամ հեռաւորութենէ կերնան ծառաստաններ, պարտէզներ, ջրաղացներ: Պարտէզներու մէջ գետափին նստած էին խումբ մը կիներ, որ իմ եւրոպական հագուստները տեսնելով, իրենցմէ մէկը պոռաց.

– Դուրպա՛ն ըլլամ, դուն հա՞յ ես, մեր քաղաքէն ի՞նչ խապար:

Մակոյկը ճիշդ եզրէն կը սահէր դանդաղութեամբ, երբ աւելի մօտեցանք կնոջը, հարցուցի թիւրքերէն լեզուով.

– Դուք ո՞ր տեղացի էք:

Ուրիշ կին մը ինձ խօսք ուղղողին դառնալով քսաւ.

– Ես քեզի չըսի՞, թէ ասոնց դէմքը հայու դէմքի չի նմանիր:

Այսուամենայնիւ պատասխանեցին.

– Մենք խարբերդցի ենք:

Մտանք քաղաք և անմիջապէս դիմեցինք տեղւոյն հազարապետ գայմագամին, որ մեր կարևոր գործերը պիտի կարգադրէր: Հարիւրապետ Օթօ Էօլման տեղեկութիւններ հարցուց տեղւոյն գաղթական հայերու վիճակի մասին: Հազարապետը պատասխանեց.

– Երբ շուկայ երթաք, պիտի տեսնէք հայերու լաւ վիճակը. ներկայիս հոս կը գտնուին աւելի քան 10,000 հայեր և դեռ նորեր գալու վրայ են. ժրաջան են, հնարամիտ և աշխատասէր: Կը յուսամ, որ մօտ ժամանակէն մեր քաղաքը Հալէպի, Դամասկոսի նման գեղեցիկ ու բարգաւաճ քաղաք մը պիտի դառնայ:

Անցանք շուկայ, որ բաւական ընդարձակ էր. ամեն կողմ կերնային տեսակ-տեսակ հագուստներով հայեր, երէխաներ, որոնք ամենքն ալ զբաղած էին առուտորով. ոմանք խանութներու մէջ զանազան արհեստներով կզբաղէին, ոմանք շրջուն վաճառողներ էին և զանազան ապրանքներով բեռնաւորուած՝ կը ծախէին, կային որ նոյնիսկ բացած էին մեծաքանակ առևտուրի տուններ: Հայ հացագործներ շինած էին գեղեցիկ կարկանդակներ, որոնք մեծ ախորժով կը գնէին տեղացիները. կառուցած էին տասնեակ մը փուռեր, ունէին դերձակի, կօշկակարի, սափրիչի, թիթեղագործի, կլայեկողներու, ջուլիակագործի խանութներ: Հայ մանուկներ կը ծախէին այլ և այլ եւրոպական մանր ապրանքներ, սիկատի թուղթ, լուցկի, թել և այլն, և տեսակ-տեսակ կերակուրներ ու քաղցրեղէններ:

Զկնորսները ձուկ կը ծախէին և ոմանք հեռու տեղերէ ածուխ բերած՝ իրենց ապրանքը կը դնէին վաճառքի:

Հանդիպեցայ այնթապցի քահանային և վարժապետի մը, որոնք զանազան գործերով կգրադէին: Հանդիպեցայ շատ մը ծանօթներու, որոնց հետ գաղտնի խօսակցեցանք: Տժգոհ էին շատ մը տեսակէտներով, բայց միանգամայն համակերպած էին իրենց վիճակին, քանի որ գոնէ այդտեղ զերծ էին կոտորածէ և այլ սարսափներէ: Ասոնք կիլիկեցիներ էին և մեծամասնութեամբ Այնթապէն:

Գետափին այնթապցի կիներ տասնեակներով նստած լուացք կրնէին. սպաս առաջարկեց անոնցմէ մէկուն մեր ձերմակեղէնը լուալ. թէն շատ քիչ բան էր մեր տուած աշխատանքը և այնքան ալ մաքուր լուացուած չէր, այնուամենայնիւ գերմանացին վճարեց 40 դրուշ: Կինը դառնալով իր ընկերներուն ըսաւ. «Աս ալ մօր զաւակ է»:

Կանչեցինք նաև հայ սափրիչ մը, որին նոյնպէս առատօրէն վարձատրեց. սպաս մեծ յուզմունքի մէջ կը գտնուէր ընդհանրապէս և այս մասնակի բարիքները, որ կրնէր, կարծես զինքը միջոց մը կը թեթևցնէին. այլևս ինձ չէր խօսեր իր կրած տպաւորութիւններու մասին, բայց իր դէմքը ջղագրգռութենէ կծկուած էր և յաճախ կը հառաչէր:

Գացինք բաղնիք. առանձնութենէս օգտուելով, կերգէի հայերէն պանդուխտի երգ մը. բաղնիքի ծառաներէն մէկը սարսափած դէպի ինձ եկաւ և ըսաւ.

– Լո՛ւ, քու երգերովդ մեզ կրակը պիտի ձգես:

Անիկա կարծած էր, որ ես իրենց քաղաքացի հայ մըն եմ. երբ տեսաւ որ օտար եմ և մանաւանդ գերման սպային հետ, քովս նստաւ և ինքն ալ սկսաւ իր ցաւերը լալ մենիներով:

Մեր մակոյկը կեցած տեղին մօտ կար նեղ անցք մը և մի քանի հողաշէն շէնքեր, որոնց մէջ կը բնակէին հայ գաղթականներ. անցած միջոցիս ինձ հարցուցին.

– Աղա՛, դուն ո՞ր տեղացի ես:

Հարցաքննելով զիրենք հասկցայ, որ Արաբկիրի շրջանէն են, և երբ իրենք ալ իմացան, թէ ես հայ եմ, զիս ներս կանչեցին, շուրջս հաւաքուեցան 40 – 50 կիներ, որոնք ամենքն ալ գուլպայ կը հիւսէին, դռները գոցեցին և սկսան խօսիլ:

Ես տեղեկութիւն հարցուցի իմ մօրաքրոջս աղջկան մասին. ոչինչ չը գիտէին. իսկ իրենք ամենքն ալ անձկութեամբ կը հարցնէին.

– Մեր մարդոցմէ լուր ունի՞ս, ի՞նչ եղան, ո՞ւր մնացին: Անոնց տարին, ըսելով թէ ճամբաներու վրայ պիտի աշխատին, մեզ ալ բերին այստեղ. ի՞նչ հրաշք, դուն ի՞նչպէս ազատուեր ես, տղայ՝, ուրեմն մեր տղաքն ալ կրնան ազատուիլ քեզի պէս:

Ըսի իրենց մէկ քանի միտքարիչ խօսքեր. ամենուն աչքերէն արցունք կը կաթէր: Անդին անկիւնը նստած էր միջահասակ, սև մազերով, սև յօնքերով, կարմիր այտերով երիտասարդ կին մը. նախշուն հագուստներ հագած էր և կուլար, անդադար կուլար: Աչքերը ուռած էին և անիկա նոյնիսկ գլուխը չէր բարձրացներ մեզ դիտելու համար:

Բայց երբ Մեզերէի անունը տուի, ինձ դարձաւ և սկսաւ խոր, խոր նայել: Ասիկա առնանգուած հայ աղջիկ մըն էր. իր գեղեցիկ հագուստները տուեր էր թիւրք զինուորական մը, որուն ճանկերէն տակաւին չէր ազատուած: Երբ պատմեցի Մեզերէի մասին, այն ատեն հաւատաց, որ ես հայ եմ և երկու խօսք ըսաւ միայն.

– Եղբայր, ինձ չէ՞ս ազատեր ասկէ:

Շուրջս կեցող կիներն ալ կըսէին.

– Աստուծոյ խաթերը համար, եթէ կրնաս, այս աղջիկը ազատէ այդ շան ձեռքէն:

Մեր դեղերը սպառած էին և սպայիս հետ դիմեցինք տեղւոյն կառավարական կեդրոնական դեղատունը: Փողոցը սալայատակուած էր և ճանապարհի երկու եզերքը, դեղատունէն մինչև 15 վայրկեան հեռաւորութիւն թափուած էին կիներ, մանուկներ, աղջիկներ. մէկուն փորը ուռած էր, մէկուն աչքերը կապուած էին, ուրիշ մը վերքերով ծածկուած էր. կին մը արիւն կը թքէր ուրիշի մը քով, որ գլխու պտոյտէն ինկած էր. այս բոլոր բազմութիւնը դեղնած, ոսկրացած, հագար ախտով, ցաւով բռնուած, ինկած էին գետնի վրայ և հերթի կսպասէին դեղատուն մտնալու համար: Իսկ դեղատան դրան առաջը խոնուած էին 100-ներով:

Մէկը ա՛խ, մէկը վա՛խ կըսէր, մէկը ողբազին կը կրկնէր “Ալլահ խատրու իշուն” (Աստուծոյ սիրոյն համար) և այսպէս աղերսանքով, պաղատանքով դեղ կը պահանջէին. իսկ դեղատան դռները ամրափակ էին և առաջը կայնած էր զինուոր մը:

Երբ գերմանացի զինուորականը երեցաւ, կեցող թիւրք զինուորը շուարեցաւ եւ սկսաւ իր ձեռքի ճիպոտովը խոնուած բազմութիւնը երկուքի բաժանել, որպէսզի ճամբայ բանայ. կիսամեռ ցաւոտ, վիրաւոր ժողովուրդը ճիպոտի հարուածներուն ներքն ինկաւ երկու կողմերուն վրայ. անհամար ոխերիմ աչքեր յառած էին սպայիս վրայ և կարծես իրենց նայուածքով ասելութիւն և անէծք կը թափէին: Մենք շտապով անցանք այդ ճամբէն, և երբ դեղատուն մտանք տեսանք, որ ամենուն շրթները կը շարժէին բան մը պոռալու համար, բայց չէին կրնար խօսիլ: Գերմանացի սպան խորապէս յուզուած էր, յանդիմանեց զինուորը իր վարմունքին համար և զոջաց ինքը անձամբ գալուն:

Հարցուցինք դեղագործին.

– Միւլֆաթ դը քինին ունի՞ս:

Անիկա կըսէր շուարած.

– Ի՞նչ կըսէ կոր:

– Սուլֆաթօ, սուլֆաթօ կըսեմ:

– Հա՛, հատեր է, ներողութիւն:

Ինչ որ ուզեցինք սպառած էր կամ շատ վատ վիճակի մէջ և ձեռնունայն վերադարձանք:

Ճամբուն վրայ հանդիպեցանք տեղացի հայու մը, որ կը քսէր.

– Օրական 40 – 50 հոգի, մեծամասնութեամբ կին, կը մենին դեղի պակասութեան պատճառաւ: Ամենայեւթին ժանտարմը, զինուորը կամ տեղացի սրիկայ մը իր տունը ունի հայ աղջիկ մը, կամ սպասուհի հայ կին մը:

Տէյլ-իւլ-Ջօրէն մեկնեցանք նոյ. 24-ին:

Դէպի Անէյ. Անէյ. Ծերուկ մը կը նուաղի. Շուկան:

Մեր մականկաւարները փոխուեցան և առինք Տէյլ-իւլ-Ջօրցի արաբներ: Ասոնք միշտ կը պատմէին իրենց սրիկայութիւնները և հայ աղջիկներու պատճառած չարչարանքները: Երբ հասանք քարաժայռի մը մօտ, երիտասարդ մականկաւարներէն մէկը տեսաւ հայ կին մը, որ յղի էր. ցատկեց դուրս մակոյկէն. ուզեց հետապնդել խեղճ կինը, բայց ահա հաւասարակշռութիւնը կորսնցնելով, երբ կուգէր մագլցիլ ցից տեղէ մը, ինկաւ գետը: Հոսանքին սաստկութեան հանդիպելով, հազիւ կարողացաւ կիսամեռ վիճակի մէջ ազատիլ. երբ սթափեցաւ, այս պատիժը երկնային համարելով, երդում քրաւ իր մօտ պահած հայ աղջիկները արձակել և միշտ հայերու պաշտպան հանդիսանալ:

Դեկտեմբերի 3-ին հասանք Անէյ: Նամակ մը ունէի յանձնելիք տեղահանուած հայու մը, որ կը բնակէր Անէյ: Հակառակ որ մենք պէտք չունէինք կենալու այդ նաւահանգիստը, այդ նամակին պատճառաւ գերմանացի սպաս հրամայեց, որ մեր մակոյկները կենան. անմիջապէս ափ ելայ և հոն տեսայ, որ քանի մը հայ գիւղացիներ տեղացիներու հետ հաւկիթի, ձաւարի և այլն առնտուր կընէին, իսկ քիչ մը անդին կարգ մը հայեր մորթ կը լուային ու կը ներկէին. դիմաւորեցի բոլորովին ալնոր ծերունի մը և նամակին հասցէն կարդալով հարցուցի, թէ ո՞ր կրնայի գտնել այդ մարդը:

– Ես եմ, ըսաւ, տուր նամակը. քրոջմէ՞ս է արդեօք. և սաստիկ յուզումէն նուաղած ինկաւ գետին:

Սպայիս հետ զացինք շուկայ գնումներ ընելու: Անէյ պզտիկ աւան մըն է պզտիկ շուկայով, ուր քանի մը խանութներ կային: Այստեղ ալ կերնային երկու փուռեր, որոնք հայերը շինէր էին, և մէկ քանի առնտուրի և արհեստի խանութներ: Հոս ալ մանուկները կաշիսատէին, ծախելով այլ և այլ նիւթեր: Երբ ուզեցինք մածուն գնել, ինչ որ չիկար շուկային մէջ, հայ կիները բերին մեզի ներկայացուցին տուփերով մածուն:

Դէպի Հադիսէ. Հադիսէ. Հայ աղջկան մը փրկագինը:

Դեկտեմբերի 4-ին մեկնեցանք Անեյն, պատուիրելով մականկալարներուն, որ առատ հաց գնեն իբր պաշար, որովհետև 3 օր անընդհատ պիտի ճամբորդէինք Եփրատի վրայ, անցնելով աւազի դաշտերու մէջէն: Անապատը այստեղ կը դառնայ բոլորովին անջրդի և ամուլ. տեղին քամին, որ նոյն իսկ գետին ջուրը կը փոթորկէ, յառաջ կը բերէ աւազի սաստիկ փոթորիկներ, որոնք օդը անշնչելի կը դարձնեն:

Ճանապարհին մեր հացը պակսեցաւ և կեցանք գիւղակի մը առջև, որ միայն 3 տուն ուներ և քերականէրայ մը, որը նոր շինած էր կառավարութիւնը ճանապարհի պաշտպանութեան համար: Դիմեցինք այնտեղ հաց գնելու, բայց միայն ալիւր կըցանք գտնել. երբ տնակներէն մէկը մտնել ուզեցի հացը թխել տալու համար, տարէց ժանտարմա մը շտապով արգելեց տան մուտքը և թոյլ չի տուաւ, որ ներս մտնեմ: Գացինք ուրիշ արաբներու քով, որոնք հաճոյքով յանձն առին մեր հացը պատրաստել տալ:

Մեր պաշտպան ժանտարմաներն ալ եկան միացան մեզի, ասոնք ալ ալիւր գնած և յանձնած էին տեղւոյն այն ծերունի ժանտարմային, որ ինձ փակեց իր տան դուռը:

Ժամանակը լրանալէ ետքը մեր ժանտարմաներէն մէկը փոքրիկ արաբուհի մը ուղարկեց.

– Գնա՛ տե՛ս, հացը պատրա՛ստ է, թէ՛ չէ:

Փոքրիկը վերադառնալով ըսաւ.

– Մարիամը կըսէ, որ քիչ մը ևս թող սպասեն:

Զարմացած հարցուցի.

– Այստեղ քրիստոնեանէ՞ր կան:

Գացի ուղղակի տեղւոյն ժանտարմային տունը և հակառակ մերիններուն արգելքին մտայ սենեակ, ուր ճակատը նստած էր ծերուկը և ճիշդ իր քովը մօտ 20 տարեկան հայ աղջիկ մը, որ տակաւին իր տարազը կը կրէր, որով յայտնի էր, թէ կիլիկեցի է: Իսկ թոնիրին մօտ կեցած էր ուրիշ հայ աղջիկ մը 19 տարեկան, նման տարագով: Երկուքն ալ տխուր էին, մտահոգ և արևակէզ: Հարցուցի ծերունի ժանտարմային, որ ոտքի ելած և բարնի կեցած էր.

– Ի՞նչ են ասոնք:

Չէր կրնար պատասխանել. աղջիկները շուարած, վախնալով կը դիտէին մեզ և կարծես թէ օգնութիւն կաղերսէին:

Իմ գերման գինուորականիս անունով խօսեցայ իրեն և ըսի, որ նախ քան մեր Պաղտատ հասնելը՝ այդ աղջիկները իր ծնողաց մօտ ուղարկէ, որոնք 3 օր առաջ անցած էին:

Վերադառնալով տեղացի արաբներուն մօտ, իմացայ որ ծերունի ժանտարման այդ երկու աղջիկները կնութեան առած էր:

Շուտով մեր մակոյկները ճամբայ ելան: Գետին ամենէն յորձանուտ և վտանգաւոր կէտն էր ատիկա. երկու կողմերը կը տարածուէին ընդարձակ աւազի դաշտերը՝ տեղին հովին խաղալիք. աւազի փոթորիկը այնքան սաստիկ կըլլայ, որ տեղացի արաբ-

ներ իսկ կը կորսուին երբեմն բարձրացող աւազին մէջ. անջրդի, անբոյս սևախառն աւազի ծովը ալեկոծուած էր:

Դեկտեմբեր 6-ին հասանք Հադիսէ: Ասիկա փոքրիկ գիւղաքաղաք մըն էր գեղեցիկ ովասիսի մէջ, որուն տուները ամփիթատրոնի մը նման կը դասաւորուէին բարձրութեան մը կողին վրայ. գետին երկու ափերը առատ արմաւենիներ կը բարձրանային: Այս գիւղաքաղաքին մէջ կային 700-ի չափ հայեր, որոնք կըզբաղէին այլ և այլ գործերով, թէն ամենքն ալ կը գանգատէին թէ գործ քիչ կայ: Գացեր էի մածուն գնելու, երբ հանդիպեցայ հայ կնոջ մը, որ հողին վրայ նստած գուլպայ կը հիւսէր և կը արտասուէր:

Աչքերը կուրացած էին գրեթէ արցունքէն, բայց անիկա կը շարունակէր հիւսել գուլպան, որ աւարտելու մօտ էր:

– Կը ծախսե՞ս, մայրի՛կ, հարցունցի:

Անիկա սրտազին հառաչեց “Ա իս, ա իս... “ ու չի կրցաւ պատասխանել:

Արաբ դրացին ինձ բացատրեց կնոջը վիշտը: Տեղւոյն ժանտարմը տարած էր իր աղջիկը և պահանջեր էր գոյգ մը գուլպայ, որպէսզի վերադարձնէ զայն. ժանտարմը ըսեր էր.

– Քանի օր ուշանաս, այնքան օր աղջիկդ ինձ հետ կանցնէ:

Կինը կարկամած մատներով, սիրտը ճնշուած վիշտով կը շտապէր այդ գուլպաները աւարտելու:

Հիթ. Այնթապի ճեմարանին աշակերտներ. Շուկան.

Պաղտատէն հայ աղջիկ կուզեն:

Դեկտեմբեր 8-ին հասանք Հիթ, որ պզտիկ քաղաք մըն է գետի ափին. կը տեսնուէին արմաւենիներու անտառներ, որոնց մէջ կը կորսուէին հողաշէն տուններ: Ամեն ինչ առատ էր այստեղ, մանաւանդ արմաւը: Այստեղ գետափին հանդիպեցայ երկու հայ երիտասարդներու, որոնք Այնթապի ճեմարանի աշակերտներ էին. դիմեցին գերմանացի սպայիս ոնէ գործ խնդրելու: Զիրենք հարցուփորձեցի. ըսին թէ քաղաքին մէջ իրենց յարմար ոնէ գործ չի կայ. կըսէին. “Երանի՛ թէ հացագործութիւն սովորէինք, քան թէ ուսում. ահա այսպէս ստիպուած ջուրին եզերքը կուզանք այն յոյսով, որ բեռնակրութիւն կամ ուրիշ բան կը գտնենք ընելու”: Վերջին ծայր յուսահատ վիճակի մէջ էին:

Շուկան թաղերուն մէջ էր. հայերն ալ այսպէս թէ այնպէս տեղաւորուած էին և կը զբաղէին զանազան գործերով. կային գլխաւորապէս քէպապճիներ և մանրավաճառներ: Իրենցմէ մէկուն հարցունցի.

– Ի՞նչպէս է ձեր դրութիւնը:

– Ի՞նչպէս... դժոխքէն անդին գիւղ չիկայ...

Ճանապարհին հանդիպեցայ հայերու, որոնք զբաղած էին տուն շինելու. աւագի, հողի խառնուրդով աղիւսներ կը շինէին և կը կառուցանէին իրենց տնակները. իրենց մէջ կային վարպետ որմնադիրներ, որոնք իրենց ձեռքին տակ եղած նիւթերով նոր ծէփեր պատրաստէին և զարմացում կը պատճառէին տեղացիներուն: Անցնելով այդ տեղէն, հասայ պզտիկ հրապարակը, ուր բաւական թիւով հայ կիներ, շուրջանակի նստած՝ գուլպայ կը գործէին կամ կը պարապէին ասեղնագործութեամբ: Այս կիները նոյնպէս այնթապցի էին:

Գետեզրի մակուկավարները մեծ մասով հայեր էին, որոնք մարդիկ կամ բեռեր կը փոխադրէին մէկ ափէն միւսը. երբ խօսեցայ իրենց հետ, ըսին.

– Կա՛յրինք կոր եղբա՛յր, բայց այս ապրիլ չէ, մահ է:

Գացի հեռագրատուն, որպէսզի իմացնեմ, որ մեզ համար կառք պատրաստեն Ֆէլլուճէի մէջ: Պաշտօնեան, որ նոր հեռագիր մը ստացեր էր, “Դարձեալ նոյն բանը” ըսելով ձեռքը անհամբերութեամբ սեղանին զարկաւ:

Հեռագիրը վերցուցի կարդացի. այսպէս էր.

“Ձեր դրկածներէն գոհ ենք, դարձեալ հայ աղջիկ մը կամ կին մը դրկեցէք”:

Խնդրողները Պաղտատի կառավարական պաշտօնեաներն էին:

Այստեղ գարունը սկսած էր արդէն. գառնուկները ծնած էին, խոտը բարձրացած էր կէս կանգուն և բանջարեղէնները հասած էին. տարւոյն լաւագոյն եղանակն էր ասիկա. ամառը 48 – 50 աստիճան տաք է շուքի մէջ:

Ռամատի. 300 գէյթունցիներ այրի մէջ. Արաբ հացագործի մը վերաբերմունքը. Ֆէլլուճէ. Մեծահարուստ հայ ընտանիքի մը պատմութիւնը:

Ռամատի հասանք դեկտեմբեր 9-ին. գեղեցիկ և բարեբեր ովասիս մըն էր. գետափին կերնէին արմաւի և նարնջի ծառեր, դաշտերը մշակուած էին և դալարին կը տարածուէր մինչև հեռունները: Շուկան կը գտնուէր քաղաքին մէջտեղ, ուր և կար քէրվանսէրայ մը: Այստեղ հացագործները և բանջարեղէն ծախողները ամբողջապէս հայեր էին. այստեղ կային 300 – 400 կիլիկեցի հայեր: Տեղացի արաբ մը կը պատմէր, որ Ռամատիի խորքերը այրի մը մէջ կան 300-ի չափ գէյթունցիներ, որոնք Ռամատիէն անցուցեր էին. ասոնց վիճակը անորոշ է. “Հայերու կտրիճներն են ասոնք” կըսէր արաբը:

Հաց գնելու համար գացի Ահմէտ Խրպարզի տունը, ուր հանդիպեցայ քանի մը այնթապցի հայերու, որոնք նոյնպէս հաց գնելու եկած էին: Հայերը հարցուփորձեցի: Անոնք կը գանգատէին անգործութենէ և վայրկեան առ վայրկեան կըսպասէին իրենց հայրենիք վերադառնալուն, հակառակ որ կառավարութիւնը յայտարարած էր իրենց,

որ այլ ևս իրենց երկիրը չի պիտի դառնան և թէ Միջագետքի մէջ հաց պիտի տրուի իրենց. ասիկա իրենց ամենէն մեծ ցաւն էր:

– Ինչո՞ւ ըսի. միթէ արաբները լաւ չէ՞ն, չէ՞ք կրնար ապրիլ իրենց հետ. ինչո՞ւ կուզէք անպատճառ ձեր հայրենիքը վերադառնալ:

– Այո՛, կըսէին, արաբները լաւ են, բայց այս կեանքը տանելի է առժամանակեայ, բայց ոչ տևական կերպով: Այս երկիրը իբր հայրենիք ընդունել չի կարելի. կրակը ինկած տեղը կայրէ. դուն հայրենիք չունի՞ս:

Ու կը հառաչէին սրտագին կերպով “Ա՛խ, ա՛խ... “: Երբ հայերը մեկնեցան, հարցուցի արաբին.

– Ո՞վքեր են ասոնք:

– Եղբա՛յր, պատասխանեց, չէ՛ս գիտեր, ի՛նչ լաւ մարդիկ են. ասոնք էարմէներ* են. չեմ գիտեր, ինչո՞ւ կառավարութիւնը զիրենք աքսորեր է այս կողմերը. կըսեն թէ ապստամբեր են, գէշ մարդիկ են, բայց մենք այդպէս բան չենք տեսներ: Ընդհակառակը այնքան լաւ ու պարկեշտ մարդիկ են, որ ես այսքան ատեն է իրենց ապառիկ հաց կուտամ, պարտք ունին, բայց դարձեալ կուտամ. վստահելի մարդիկ են. ապահով եմ, որ երբ և իցէ իրենց պարտքը կը վճարեն:

Դիտեցի որ գերման սպաս զբաղած էր գաղտնապէս թշուառ խումբի մը լուսանկարը առնել, հակառակ որ խստիւ արգելուած էր մեզի ունէ պատկեր վերցնել. մօտը գացի և հարցուցի, թէ ի՞նչ պիտի ընես.

– Պատերազմէն ետքը պիտի յայտնեմ այս բոլոր վայրագութիւնները, ըսաւ:

Միասին կերթայինք մակոյկ, երբ ճանապարհին տեսանք, որ ժանտարմաներ մատանիներ կը ծախէին. ուզեց գնել կնոջը համար, բայց երբ իմացաւ, որ հայերու կողմապետի արդիւնք է, ետ տուաւ ըսելով.

– Չեմ կարող գնել, չեմ կարող նոյն իսկ տեսնալ:

Նոյն օրը մեկնեցանք Ռամատիէն և դեկտեմբեր 10-ին հասանք Ֆէլլուճէ, ուր մեր գետային ճամբորդութիւնը վերջացաւ:

Ֆէլլուճէ կը գտնուի ձախ ափին, որ միացած է միւս ափին շարժական կամուրջով. արմաւի կեղևով հիստուած և ձիւթով պատուած բոլորաձև մակոյկներու շարքի մը վրայ հաստատուած է այս փայտեայ կամուրջը, որը կը բանան կամ կը գոցեն, երբ ցանկանան:

Ֆէլլուճէի մէջ կը գտնուէր Քոյումճեան մեծահարուստ ընտանիքը, որուն կը պատկանէր Ֆէլլուճէի մեծ մասը. այնտեղ կայ ալիւրի, կիրի գործարաններ և ջրաբաշխ մեքենաներ, որոնք բոլորը նոյն ընտանիքի սեպհականութիւն էին: Տեղս ունի ընդարձակ շուկայ, կառավարչատուն, հեռագրատուն, պարտէզներ, խիտ արմաւենիներ, կայ նաև շատ առատ ձուկ:

* Էրմէնլեր–հայեր (Ա. Չ.):

Գացի այդ ընտանիքն ունէ մէկը փնտռելու. հրէայ մը չարախնդութեամբ ըսաւ ինձ.
– Անոնք ամենքն ալ քշուեցան, անոնց մասին հեշ մի հարցներ, տուններին, տեղեր-
նին, գործերնին տակն ու վրայ եղած է. իրենց բոլոր ստացուածքներուն փոխանորդ
մը դրած են:

– Ո՞ր ուղարկեցին, հարցուցի:

– Մուսուլ. պատասխանեց, – և կարծեմ ճամբան սպանեցին զիրենք:

Յետոյ առիթ ունեցայ իմանալու, թէ հրէային կարծիքը ճիշդ չէր և թէ անոնք Մու-
սուլէն հասեր էին Միջագետք:

Տէլլուճէի մէջ մեր բերած ռազմամթերքը յանձնեցինք զինուորական կառավարու-
թեան. առինք մեզ հետ եղած դրամը և կառք վարձելով դեկտեմբեր 11-ին մեկնեցանք:

Պաղտատ. 49 հայեր կաքսորուին. Կախաղան մը. Հայերու դրութիւնը.

Գերմանական հիւպատոսին արգելքը. Խալիլ փաշային խօսքերը:

Պաղտատի մէջ քանի մը օր մնացինք: Այնտեղ լսեցի, որ 49 հոգի, տեղացի և դրսեցի
երևելի հայեր, քսորուած են դէպի Մուսուլ: Հանգիստ հասեր էին տեղ և նոր հեռագ-
րեր ու իմացուցեր էին, որ կը մեկնին դէպի Տէլլ-իւլ-Ջօր: Դեկտեմբեր 2-ին կախաղան
հաներ էին սեքստացի Թագաւորեան մականունով երիտասարդ մը, որ իբր թէ
բռնուած էր արաբներու մէջ ի նպաստ անգլիացիներու պրոպագանտ ընելու յանցան-
քով: Պաղտատի մէջ բանտարկուած կը մնային մէկ քանի հայեր:

Մնացեալ հայերը, որ 200 տուն կը կազմեն, հանգիստ են առաջմ:

Հանդիպեցայ խարբերդցի երիտասարդի մը, որ լսելով թէ ես անցած եմ Միջագետ-
քի քսորավայրերէն, տեղեկութիւն կուզէր իր մօրը մասին, ուրկէ կառապանի մը մի-
ջոցաւ ստացած էր հետեւեալ նամակը.

“Միւրելի որդիս, հայրդ Խարբերդի մէջ իմ աչքիս առջնը մորթեցին. երկու եղբայրնե-
րուդ և քրոջդ հետ հոս դրկեցին մեզ, արաբներու մէջ. հիմակ որ այս նամակը կը գրեմ,
եղբօրդ մէկը մեռաւ, իսկ ես և միւսները անօթի կը մեռնինք: Եթէ մեզի օգնութիւն չի
դրկես շուտով, երկար չենք ապրիր”:

Տղան շուարած էր և չափազանց յուզուած. ինչպէս առիւծ մը վանդակի մէջ, անկա-
րողութենէն խելակորոյս էր, որովհետև չէր գիտեր, ինչպէս օգնութիւն հասցնէր իր
հարազատներուն:

Ամեն օր զանազան հայեր, այս ինչ կամ ինչ գաւառացի կուգային ինձմէ տեղեկու-
թիւն խնդրելու իրենց գաւառի, ազգականներու և առհասարակ հայերու մասին:
Մինչև այդ օրը ոչ ոք տեղեկութիւն ունեցած էր անցուդարձերու մասին:

Երբ կը պատմէի իմ տեսածներս, սարսափով ու զարհուրանքով կը պաշարուէին և
իրենցմէ մէկուն ուղղուելով կըսէին.

– Յակոբ, դու ինչ ասացար՞ էիր:

Յակոբ շարունակ կըսէ եղեր.

– Տիգրիսի ջուրին համը փոխուած է, կարծես թէ արեան համ կուզայ:

Գերմանացի սպայիս հետ զացինք գերմանական հիւպատոսին այցելութեան, որը երբ զիս տեսաւ, հարցուց պ. Օթօ Էօլմանին.

– Թարգմանդ հա՞յ է. եթէ հայ է, խստիւ կարգելեմ քեզ հետդ տանիլ. ես ուրիշ թարգման կուտամ քեզի:

Հակառակ որ ես պարսկերէն չէի գիտեր, սպաս համարձակեցաւ հիւպատոսին ըսել.

– Այս պարոնը լիբանանցի կաթոլիկ արաբ է, շատ լաւ պարսկերէն գիտէ, իրեն վարժուած եմ և իր հաւատարմութիւնը փորձուած է. կը խնդրեմ, որ պաշտօնապէս ընդունիք զինքը և իրեն անցագիր տաք Պարսկաստան անցնելու:

Հիւպատոսը, որ կասկածով կը նայէր ինձ, մերժեց սպայիս խնդիրքը:

Երբ մեր սենեակը վերադարձանք, պ. Օթօ Էօլմանը ցաւ յայտնեց ինձ իր անյաջողութեանը համար.

– Ես քեզ կը տանիմ, ըսաւ, մինչև սահմանագլուխ, և ամեն միջոցաւ կաշխատեմ քեզ օգտակար ըլլալու, բայց հակառակ պարագային պատասխանատու չեմ, զիս մի մեղադրէր: Ես կը վստահիմ քեզ և գիտեմ, որ ինչ ալ պատահի, դու ինձ չես վնասեր:

Ընդունեցի իր առաջարկը:

– Զիս տար, ըսի, մինչև սահմանագլուխ, ես կանցնեմ կերպով մը:

Զիս խրախուսեց և յոյս յայտնեց, որ կը յաջողենք. իմ նկատմամբ սպաս եղած էր միշտ վեհանձն, առատաձեռն և ազնիւ:

Պաղատաւի մէջ արժանահաւատ անձէ մը լսեցի, որ Խալիլ փաշան խօսեր էր իր տիհաստի քլիպին մէջ և ըսեր էր.

“Հայաստանի սիրտը իսլեցի հանեցի, կարգը եկաւ արաբներուն: Ով որ օսմանեան մահիկին տակ գլուխ չի ծռեր, Հայաստանի վիճակին կենթարկուի”:

Լսեցի նաև:

Թիւրքերը անգլիացիներէն գրաւած էին երկու աւերալաններ վնասուած վիճակի մէջ, ուզեր էին նորոգել, բայց թիւրք չէին գտեր և ստիպուէր էին դիմել հայերու, հայ-հոյեւոյ իրենց մարդոց անճարութեան դէմ: Այդ աւերալանները գործածութեան մէջ էին:

*Դէպի Պարսկաստան. Արաբները երկու սնդուկ զէնք
կը գողնան. Սահմանագլուխը կանցնինք. Գերմանացի սպան
կը հիւանդանայ, կը խելագարուի. Դէպի Քերմանշահ. Գերմանացի սպան անձ-
նասպան կըլլայ. ռուսները կը գրաւեն Քերմանշահ և ես կանցնիմ Կովկաս:*

Դեկտեմբեր 21-ին մեկնեցանք Պաղտատէն. մեզ յանձնեցին անգլիացիներէ գրաւուած զէնքեր և ռազմամթերք, որոնք կառքերու վրայ բեռցուցած ճամբայ ելանք դէպի Պարսկաստան: Պաքուպէ հասնելէ առաջ մեր կառքերէն երկուքը ետ մնացին և տեղացի արաբներ, առիթէն օգուտ քաղելով, երկու սնտուկ զէնք գողցեր ու տարեր էին: Կէս գիշեր էր, երբ կառապանները եկան, հասան և եղելութիւնը պատմեցին սպայիս. գերմանացին շատ շուարեցաւ և խորապէս յուզուած կըսէր.

– Ես ի նչ պիտի ընեմ, ես բոլորովին անպատուեցայ, պիտի ըսեն, թէ չի կրցայ զէնքերը ամբողջ իր տեղը հասցնել:

Իր յուզմունքը տեսնելով, զգացուեցայ, որովհետև անկեղծօրէն կը սիրէի զինքը. որոշեցի զինքը այդ տագնապէն ազատել և յայտնեցի, որ ես կը յօժարիմ երթալ և ոնէ կերպով ետ ստանալ գողցուած զէնքերը:

Երբ իմ առաջարկս լսեց, ուրախութեանը չափ չի կար, և անմիջապէս ինձ յանձնեց 25 ոսկի, իր ասորճանակը, դաշոյնը և զիս արտօնեց, որ և հարկ եղած պարագային զէնք գործածեմ անվախ կերպով: Կառապաններէն ձի մը առաւ, յանձնեց ինձ և մեկնած պահուս ըսաւ.

– Գնա՛, քեզ տեսնեմ, որքան կտրիճ ես. ես քու ազգդ կը ճանչնամ. կը յիշե՞ս, երբ քեզ ըսի, թէ հայ թարգման կառնեմ, ուրիշ ազգէ մարդ չեմ ուզեր. դուն ինձ հարցուցիր, ինչո՞ւ. ահա տեղը եկաւ, քեզի կը յիշեցնեմ թէ ինչո՞ւ:

Արաբի մը առաջնորդութեամբ գիշերանց անցայ Նահիր-էլ-Պաքուպէ գետէն, կտրեցինք ընդարձակ դաշտ մը, անցանք արմաւենիներու անտառէ մը, որուն ետև դաշտին մէջ երևացին հազարաւոր վրաններ:

Երբ մենք երևցանք, իրարանցում առաջ եկաւ վրանաբնակներուն մէջ, որոնցմէ ամեն մէկը իր զէնքը խլելով դէպի մեզ յառաջացան. մենք ձեռքերնիս վերցուցինք, որով յայտնեցինք, թէ թշնամական դիտաւորութիւն չունինք և մեր խնդրանքին վրայ մեզ առաջնորդեցին իրենց շէյխին մօտ: Այնտեղ արաբական սովորութիւններու համեմատ բարենելէ ետքը խնդրեցինք մեր կեանքի ապահովութիւնը: Շէյխը մատը վեր բարձրացնելով մեզ վստահացուց: Մեզ հիւրասիրեցին սուրճով, ուրկէ ետքը յայտնեցի շէյխին, որ իր ցեղին մարդիկը մեր ռազմամթերքէն երկու սնտուկ վերցուցած են և թէ ասիկա իմ սպայիս համար պատուոյ խնդիր է: Շէյխը հրամայեց, որ սնտուկները բերեն, ինչ որ կատարեցին շուտով. բայց սնտուկները պարապ էին. զէնքերը, որ բաշխուած էին արդէն, հաւաքեցին ու բերին շէյխին ստիպումներուն վրայ: Շէյխը մեզ յանձնեց երկու ջորի, որոնց վրայ բեռցուցինք սնտուկները և իրենց արաբներէն երկու հոգիի

ուղեկցութեամբ մեկնեցանք: Շատ պնդեցի դրամական նուէր մը ընելու շէյխին, բայց անիկա չընդունեց, միայն քանի մը ոսկի տուինք մեզ ուղեկցող արաբներուն:

Գերմանացի սպաս գիւղին ծայրը կսպասէր անհամբերութեամբ. երբ տեսաւ լեցուն սնտուկները, որոնք նոյն իսկ գողերու ձեռքով կը վերադարձուէին, ուրախութենէն ճակատս համբուրեց և ձեռքս սեղմելով ըսաւ. “իմ պատիւս փրկեցիր”:

Երբ մեր սենեակը մտանք, թէյ և պտուղ պատրաստեց և հակառակ որ չորս աֆղան ծառաներ ունէինք, ինքը ինձ կը ծառայէր:

Պաքուպայէն գացինք Շահրապան, անկէ Հանիքէն, որ սահմանագլխի առաջին կայանն էր. կառքերը փոխուեցան ջորիներու. տեսայ, որ սպաս մեծ ոգևորութեամբ զիս կը փնտռէր. երբ իրեն մօտեցայ, ըսաւ.

– Լաւ լուր ունիմ տալիք. սահմանագլխէն անցնելը դիւրին է, բայց և այնպէս պէտք է զգոյշ ըլլալ:

Եւ կարգադրեց այսպէս. առաջ ջորեպանները պիտի անցնէին, ետնէն ես, իսկ ժամէ մը ետք ինքը, որպէսզի ունէ արգելքի պարագային կարենար զիս կերպով մը ազատել:

Ջորիները արդէն հասած էին սահմանագլուխ և ես դիմեցի տեղւոյն միւլագիմին (յիսնապէտ) և իբր պաշտօնական անձ ներկայանալով, պահանջեցի բեռներու պաշտպանութեան համար ժանտարմաներ. ըսի իրեն, թէ մեծ պատասխանատւութեան տակ կիյնայ և պատերազմի գործերուն վնասող կը համարուի, եթէ ինքը չօգնէ ինձ: Յիսնապէտը շուարած կըսէր, թէ ճանապարհը շատ վստահելի է, այսուամենայնիւ կը տրամադրեմ ինչքան ժանտարմա որ հարկ է:

Տեսնելով որ իր ուշադրութիւնը ուրիշ բանի վրայ կեդրոնացաւ և մտքովը իսկ չանցնիր ինձ արգելք ըլլալ, առանց երկար պնդելու ճամբաս շարունակեցի: Այսպիսով անցանք սահմանագլուխը և դեկտեմբեր 26-ին հասանք պարսկական առաջին կայանը՝ Խասրը Շիրին, ուր գերմանացի սպաս եկաւ միացաւ ինձ և զիս շնորհաւորեց, որ ազատուեցայ թրքական լուծէն:

Խասրը Շիրինէն մեկնեցանք Սարփուլ, ուր առաւօտ կանուխ հանդիպեցանք բարձրաստիճան գերման զինուորականի մը: Անիկա յայտնեց Օթօ Էօլմանին, որ պէտք է շտապել, թշնամին կը մօտենայ և հրամայեց որ ռազմամթերքը տեղը հասցնելէ ետքը անմիջապէս երթայ պատերազմի դաշտ:

Այս պատճառաւ հարիւրապետ Օթօ Էօլմանը կարգադրեց, որ ես հսկեմ և իմ պատասխանատւութեան ներքն առնեմ մեր կարաւանը և աֆղաններուն յայտնեց, որ ամեն բանի մէջ ինձ հնազանդին:

Այն օրը սակայն գերմանացի սպան կրկին դարձաւ մտահոգ և տխուր, շատ գունատ էր և գլխու պտոյտ ունեցաւ. ստիպուած հանգչեցաւ անկողնին վրայ և զիս մօտը կանչելով սկսաւ ջղագրգռութեամբ խօսիլ:

Կը մտաբերէր իր ծնողքը, որ Պերլինէն էին, կը յիշէր մանկութեան օրերը և մեծ եռանդով կը խօսէր կնոջը վրայ, որ նոյնպէս Պերլինէն էր և այս պահուս կը գտնուէր

Թաւրիզ: Երկար ճամբորդելէ ետքը կնոջը հետ, որովհետն պատերազմէն առաջ Մուկուայի մէկ գործարանի ներկայացուցիչն էր, հասեր էին Թաւրիզ, ուր յարաբերութիւններ ունէին եւրոպական և հայկական գաղութներուն հետ: Պատերազմը յայտարարուելէ ետքը՝ կինը պահած էր ամերիկեան հիւպատոսին քով և ինքը՝ Պաղտատի ճանապարհով եկած էր Պոլիս: Մեկնած ժամանակ կինը յղի էր և անդրանիկ զաւակը ծներ էր իր բացակայութեան, որուն պատկերը ստացեր էր Հալէպի մէջ: Ցաւոտ սրտով կը խօսէր իր յոգնութեան և ջղագրգռութեան վրայ: Իր բոլոր տեսած սոսկալի բաները կը վերադառնային յիշողութեան:

– Այդ կիները ու այդ երեխաները տեսնելէ ետքը՝ ի՞նչպէս հանգիստ սրտով պիտի տեսնեմ Լուիզա ու որդիս, կըսէր մտատանջութեամբ:

Հետնեալ օրը ստիպուեցանք սակայն ճամբայ ելլել և դէկտեմբեր 28-ին հասանք Սուք Հարատիզէ, ուր գերմանացի հարիւրապետը խիստ կերպով ջերմէ բըռնուեցաւ և ստիպուեցաւ անկողին իյնալ ու ըսաւ ինձ.

– Քու հաւատարմութեանդ ամեն ինչ կը վստահիմ, նոյն իսկ կեանքս:

Տակաւին բոլորովին չառողջացած ստիպուեցանք մեկնիլ Քիրինտ, ուր կէս գիշերին Թեհրանի գերմանական դեսպանը մեզ գտաւ և ստիպողաբար հրամայեց, որ անմիջապէս մեկնինք և ռազմամթերքը հասցնենք Քերմանշահ: Այդ գիշերը Օթօ Էօլման շատ վատ անցուց և անընդհատ ու յուզմունքով խօսեցաւ Միջագետքի մէջ մեր տեսած սոսկալի բաներու մասին. երբեմն կը լռէր ու ահա կնոջը անունը կուտար. “Լուիզա, Լուիզա”... զարմանալի կերպով կը զուգորդէր իր կրած տաժանելի տպաւորութիւնները կնոջը և նորածին երեխային հետ:

– Այնպէս կը թուի, որ ես չի պիտի յաջողիմ կինս ու զաւակս տեսնել, ըսաւ:

Դեկտեմբեր 30-ին հասանք Հարունապատ. երկրորդ օրը ջերմը սաստկացաւ և սկսաւ զառանցել. երբ մէկը մտնէր մօտը, ոտքի կելլէր ու կըսէր. “Ահա կայսրը եկաւ”. կը մերկանար, ինչ որ ունէր կը նետէր և կըսպառնար. յետոյ կը կանչէր զիս:

– Ես խենթեցեր եմ, ինձ ուշադրութիւն մի դարձներ, կըսէր:

Չառանցանքը կրկին կը սկսէր. կամ ժամերով ակնապիշ կը խաղար ոնէ շիւղի կամ չնչին թելի մը հետ:

Տեսնելով որ այլ ևս ճամբորդել անկարելի էր այս վիճակին մէջ, նամակ մը գրեցի Քերմանշահի գերման հիւպատոսին, թէ ես, հարիւրապետ Օթօ Էօլմանի թարգմանը, կը տեղեկացնեմ, որ սպաս ծանր հիւանդ է, խելակորոյս վիճակի մէջ. խնդրեցի՝ բժշկական օգնութիւն և սպայ մը, որ ստանայ ռազմամթերքը և դրամը: Եւ գիշերանց՝ աֆղան ծառաներու մէջ մէկ ոսկի պարզն տալով, նամակս դրկեցի:

Երկրորդ օրը մինչև գիշեր մարդ չեկաւ. սպաս գրեթէ բոլորովին խենթեցեր էր ու անձնասպանութեան մասին կը խօսէր. իր զէնքերը առի ու փոխադրեցի ուրիշ տեղ. երբ հազուադէպ կերպով սթափէր, կը ստիպէր զիս, որ իր սենեակը պառկեմ:

– Կրնայ ըլլալ, որ ես մեռնիմ, կըսէր, բայց մի վախնար, ես քեզ չեմ վնասեր:

Ժանտարմա մը դրի դռանը առաջը իբրև պահակ և ես մնացի քովը:

Գիշերը լսեցի, որ կառք մը կուգայ. պատահական բան էր այս. Քերմանշահէն կը վերադառնար գերման էնժէնիօր մը, որու ոտքը կոտրեր էր բարձրութենէ մը ինկած ըլլալուն: Դիմեցի իրեն, բացատրեցի ամեն ինչ և ինքը ինձ հետ պատգարակով եկաւ Օթօ Էօլմանին մօտ: Ուզեց խօսել, բայց հիւանդը զառանցանքի մէջ էր և ոչինչ չէր հասկնար. ուզեց դեղեր տալ, բայց հիւանդը կատաղութեամբ մերժեց. այն ատեն էնժէնիօրը զիս դուրս կանչելով ըսաւ, թէ ամեն ինչ իր պատասխանատուութեան տակ կառնէ և հետևեալ քարտը գրեց.

“Տեղիս պարսիկ ժանտարմաներուն յանձնէք ռազմամթերքը և ամեն ինչ որ ունիք և առանց յայտնելու թէ ինչ կայ մէջը մեկնեցէք անմիջապէս Քերմանշահ, որովհետև հարիւրապետ Օթօ Էօլմանը սաստիկ ջերմ ունի, որ ազդած է ուղեղին և կրնան մեծ վտանգներ յառաջ գալ”:

Անմիջապէս կարգադրեցի, որ կառք բերեն և մեծ դժուարութեամբ հիւանդին հագուստները հագցնելով մեկնեցանք, ամեն ինչ թողլով Հարունապատի մէջ: Գիշերը շատ մութ էր, ցուրտ, ձիւնոտ ճամբան խորտ ու բորտ և հիւանդը շարունակ կը զանգեր: Երկրորդ օրը առաւօտուն հանդիպեցանք Քերմանշահի գերմանական հիւանդանոցի բժշկին և զինուորականի մը, որոնք մեզ դիմաւորելու եկած էին, և անմիջապէս Օթօ Էօլմանը փոխադրեցին հիւանդանոց, իսկ ինձ սենեակ մը յատկացուցին քաղաքին մէջ:

Հարիւրապետ Օթօ Էօլման քիչ լաւացեր էր հիւանդանոցի մէջ և ուզեր էր զիս տեսնել. երբ տեղւոյն գերման հիւպատոսին ներկայացայ, քովս գտնուած թուղթերը յանձնելու համար, անմիջապէս զիս ուղարկեց հիւանդին քով, ըսելով թէ ստիպողաբար զիս կուգէ: Հիւանդանոցին բժիշկը պայմանաւորուեցաւ հետս, որ ես մնամ սպայիս մօտ մինչև առողջանալը: Երբ հարիւրապետը զիս տեսաւ, կարծես բոլորովին լաւացաւ, անկողնին մէջ նստաւ և սկսաւ գանգատիլ հիւանդապահներու կոպտութենէն: Որոշեցինք, որ գիշերը անցընեմ իր սենեակը, և հետևեալ առտուն բժիշկը քննութենէն ետքը ինձ յայտնեց, որ իմ ներկայութիւնս մեծ տարբերութիւն ըրեր է հիւանդին մտքին վրայ և խնդրեց, որ չի հեռանամ:

Բայց հիւանդանոցի կառավարչուհին կոպիտ և անհանդուրժելի վարմունք ցոյց տուաւ իմ նկատմամբ, մերժելով ուտելիք տալ և զիս համարելով ծառայ մը, որուն կարելի է ամենէն նուաստ աշխատանքը հարկադրել: Այս բանէն վիրաւորուած՝ խնդրեցի սպայէս, որ արտօնէ ինձ գոնէ գիշերը մեկնելու և խոստացայ ամեն օր երթալ այցելել իրեն: Հիւանդութիւնը գրեթէ անհետացած էր արդէն և այլևս չէր զառանցեր. նոյնիսկ խորհելով, որ դրամ չունիմ, կարգադրեց որ իր անձնական դրամէն, որ բժիշկին մօտ կը գտնուէր, վերցնեմ ինձ պէտք եղածը. իմ քովս եղած թուղթերը ամբողջովին վերադարձուցի իրեն, որոնց մէջ էր իր յուշատետրը, ուր օրը օրին կը գրէր

իր տպավորությունները: Միայն զենքերը չէի յանձնած իրեն զգուշութեան համար. վերջին գիշերը ստիպողաբար պահանջեց ու սկսաւ պոռալ.

– Ասոնք զիս պիտի մեռցնեն, պէտք է ինքզինքս պաշտպանեմ. բայց շուտով հանդարտեցաւ և քանի մը անգամ “Լուիզա” մըմնջելով պառկեցաւ:

Մեկնած պահուստ յայտնեցի բժիշկին, որ անձնասպանութեան գաղափար ունեցած էր և անհրաժեշտ էր, որ գիշերը մէկը դնէին քովը հսկելու:

Յաջորդ առաւօտուն կանուխ հիւանդանոցի սպասաւորը կը տեսնէ, որ հիւանդը հագուած զինուորական հագուստները, դրած պաշտօնական գլխարկը և կուրծքին վրայ պարսկական շքանշանը՝ բակ իջած է ու սուրը կը փնտռէ: Չգտնելով իր փնտռածը, կը վերադառնայ սենեակ և սուրի մէջքի կապը, որ այնտեղ մնացած էր, վիզը կանցնէ, ծայրը կամրացնէ կարճ դռան մը երկաթին և հակառակ որ հասակը երկար էր, ոտքերը վեր քաշելով ինքզինքը կը կախէ ու անձնասպան կըլլայ:

Հակառակ իր գառանցական վիճակին, իր լաւ ժամերուն, մանաւանդ վերջին օրերը, չէր մոռցած իմ մասին լաւ վկայութիւններ ընելու յուշատետրին մէջ և չէր յայտնած իմ հայ ըլլալս:

Հետևեալ օրը տեղի ունեցաւ շքեղ յուղարկաւորութիւն. դագաղին հետևեցայ մինչև գերեզմանատուն. սուրը և գլխարկը դրին դագաղին մէջ ու թաղեցին: Ռուսական բանակը կը յառաջանար դէպի Քէնկեավէր: Թիւրքական բանակն ալ հասած էր Քերմանշահ. ինձ պէտք ունեցան իբր թարգման և դրկեցին թիւրքական բանակին հետ գերման սպաներուն մօտ: Մեկնեցանք դէպի Սահնէ, ուրկէ թիւրքերը յարձակումի սկսան Քէնկեավէրի վրայ, զոր ռուսները գրաւած էին արդէն:

Գրաւեցին Քէնկեավէրը, բայց ռուսական մեծ ուժերու ճնշումին ներքն նահանջեցինք դէպի Քարակէօզլիւ. այստեղ ուղեցի փախչել և հիւանդ ձևանալով պառկեցայ պարսկական քերվանսէրայ մը, որու տէրը կուզէր զիս իր տունը տանիլ զիս իսլամ կարծելով:

Յառաջապահ քիւրդերը, որ Քէնկեավէրը թողելու վրայ էին, քերվանսէրայ մտան և, երբ զիս տեսան, շուտով տեղեկացուցին թիւրք բանակին, որ մօտակայ լերան ստորոտն էր. քանի մը ձիաւոր ժանտարմաներ եկան և զիս հիւանդ իսլամ մը կարծելով, մեղքցան ու զիս տարին Քարակէօզլիւ: Այնտեղ նոյնիսկ պարսիկ մեռեալ մը կար, իմամ չի կար, ինձմէ խնդրեցին քորանը կարդալ, ինչ որ կատարեցի:

Այդ բանակին մէջ լսեցի Հասան Էֆէնդի Իւզբաշին, որ կըսէր.

– Եթէ ձեռքերնիդ անցնին հայ գերիներ, առանց գերման սպաներուն տանելու, տեղն ու տեղը սպաննեցէք:

Ռուսներուն ճնշումը կը սաստկանար. փետրուար 19-ին սկսանք նահանջել և 22-ին հասանք Քերմանշահ:

Առիթը յարմար համարելով, ուղեցի թագնուել Քերմանշահի մէջ, հակառակ որ գերման սպաները թարգմանի մեծ պէտք ունենալով, շատ խոստումներ կընէին. բայց

ես նահանջի տակնուվրայէն օգտուելով, ապաստանեցայ քրիստոնեայի մը տուն, որուն կաշառք տուի: Գիշերանց ռուսները գրաւած էին Քերմանշահի բարձունքները, թիրաքերը քաշուած էին արդէն. և երբ ես դուրս եկայ իմ թագստոցէն, առաջին անգամ շուկային մէջ հանդիպեցայ երկու ռուս զինուորներու, որոնք երբ լսեցին թէ հայ եմ ու հայեր կը փնտռեն, ցոյց տուին դաշտը, ուր դիմեցի անմիջապէս: Հոն հանդիպեցայ հայ սպաներու և Խան Գուրգէն Սաղնախսքի Բւզպաշեանին: Զիս ընդունեցին շատ լաւ և ամեն կարգի դիրութիւններ ընծայեցին: Չորս ամիս ծառայեցի ռուսական բանակին մէջ իբր գրաքննիչ և այդ միջոցին արդէն իմ տպաւորութիւններս սկսայ դրկել Բագուի “Արև” թերթին*: Իմ տաժանելի ճամբորդութիւնս ջղերս քայքայած էր և արձակուրդ խնդրելով մեկնեցայ դէպի Կովկաս:

Զապէլ Եսայեան

(Վերջ)

“Գործ”, 1917, -3, մարտ, էջ 64–99:

* “Արև” թերթի 1916 թ. ապրիլի 1-ի համարում տպագրված “Միջագետքի եւ Սիրիոյ հայերի վիճակը. I” անստորագիր նյութի վերնագրի տակ խմբագրության կողմից գրված է. “Ստորև դնում ենք Քերմանշահից գրուած մի հայ բժշկի հետաքրքիր նամակը՝ Եփրատի ափերում, Հալէպից սկսած մինչև Բաղդադ, ցրուած հայ տարագիր ժողովրդի կացութեան մասին:

Բժիշկը անձամբ անցել է դժբախտ հալածականների բոլոր կայանները և խոստանում է յաջորդաբար “Արև”-ին հասցնել իր տպաւորութիւնները: Եվ, ահա, ապրիլի 2-ից սկսած թերթում “Հ. Թորոյան”, “Մեր սեփական թղթակից”, “Քերմանշահից՝ Հ. Թ.” և նմանատիպ այլ նշումներով տպագրվում են “Միջագետքի եւ Սիրիոյ հայերի վիճակը (Ականատեսի տպաւորութիւններ)” (2, 5, 6, 7. IV. 1916), “Սիրիոյ և Միջագետքի հայերի վիճակը” (24. IV. 1916), “Հայերը Միջագետքում” (“Եդեսիոյ ինքնապաշտպանութիւնը եւ անոր վախճանը”) (3. V. 1916), “Միջագետքի հայերու վիճակը: Անմիջական օգնութիւն է պետք” (7. V. 1916), “Հայերը Միջագետքում” (“Կառավարութեան վերաբերմունքը”, 8. V. 1916, “Նիսիպի հայ գաղթականութիւնը”, 9. V. 1916, “Զարդից ու աքսորից գերծ հայերը”, 12. V. 1916), “Ասորիքի արաբներն ու Թիւրքիան” (14. V. 1916), “Պարսից ժանդարմներն ու քիւրդերը” (15. V. 1916), “Բաղդադի երկաթուղին և հայերը” (17. V. 1916) վերնագրերով հաղորդումները: Ի դէպ, այս նյութերից շատերի մասին ռուսերեն թարգմանությամբ հաղորդումներ են տպագրվել Մոսկվայում լույս տեսնող “Армянский вестник” շաբաթաթերթի մի շարք համարներում՝ “Положение армян в Месопотамии” վերնագրի ներքո (տե՛ս 1916, -12–13, էջ 41–42, -20, էջ 17–18 և այլն):